

11403

68 (91.99)
<hr/>
p - 25

8(91.542)

1365

473

Ս. ԹԱՌԱՅԵԱՆՑ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԻ

ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

ԱՐՏԱՏՊԱՆ

ԵԶԳԵԳՐԵԿԵՆ ՀԵՆԳԻՍԻՑ

Թ Ի Փ Դ Ս

Տպարան Ա. Գ. Ռոտինիանցի || Типография М. Д. Ротинианца.
Голов. просп., д. № 41.
1898

12002

2011

68. (91.542)

Թ-25
այս

Ս. ԹԱՌԱՅԵՆՆԵՑ

Ի զոպոք ասացիք ձեր սրտերով թող լինի
ձեր սրտերը ինչպես ձեր քեղերը
Գրեցի զաստուարաբանս
1 8 12 16

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ

ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

931

Ա Ր Տ Ա Տ Պ Ա Ն

Մ Ջ Գ Ա Գ Ի Ը Կ Ը Ն Հ Ա Ն Գ Ի Ս Ի Ց

Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մ. Դ. Ռոտինյանցի || Типографія М. Д. Ротинянца

Голов. пр., д. № 41.

1898

17494

Այ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Ս. ԹԱՌԱՅԵԱՆՅԻ

Ն Ա Ռ Ա Բ Ա Ն

Խիստ հետաքրքիր և կարևոր հարց է աչն, թէ ինչպէս է փոքր առ փոքր զարգացել ներկայիս առաջ գնացած երկիրների բարդ արհեստագործութիւնը, թէ նա ինչ աստիճաններով է մագլցել, և թէ ինչու անպատճառ անցել է նա այդ աստիճանները... թէ արդեօք այդ աստիճանական զարգացման մէջ որեւէ օրինակաւորութիւն, կանոնաւորութիւն տեղի է ունեցել, և ինչի մէջ է կապուցել այդ օրինակաւորութիւնը: Սույն հարցը պարզելու համար հարկաւոր է հետազօտել մի շարք աչնպիսի երկիրների արհեստագործութիւնները, որոնք տակաւին չես են մնացել, բայց ոչ հաւասար չափով: Այդ տեսակէտը ունենալով, մտադիր եմ իմ ոգիների համեմատ հետազօտել աչն երկրի արհեստագործութիւնը, ուր բնակուած են հայերը մի քանի ուրիշ ժողովուրդների հետ միասին. որովհետեւ թէև հայերը արդէն տեղ-տեղ ընտելացել են նոր (եւրոպական) ձեւերին, աչնուամենայնիւ նրանք շատ դէպքերում արհեստագործում են իրանց նախահայրերից ժառանգած ձևերով: Այդ ձևերը համեմատելով եւրոպականների հետ, կարող են նախնական համարուել:

Աչպիսի մի հետազօտութիւն մեզ աւելի կարևոր է թւում նաև աչն պատճառով, որ հաչ ազգը զեռ հազարամեակներ առաջ, երբ Եւրոպան տակաւին ճահիճներով և կուսական անտառներով ծածկուած էր, ոչ աննշան քաղաքակրթութիւն ունէր, ըստ որում նա առևտուր էր անում բարեւացոց, ասորոց, փիւնիկացոց և եգիպտացոց հետ: Աւելի ուշ, նոչնպէս տեղական չարաբերութիւններ է ունեցել պարսիկների, արաբների և նոչն իսկ միջին դարերի եւրոպացիների հետ: Բոլոր լիչեալ ազգերը թողել են իրանց

Дозволено цензурою. Тифлисъ, 30 Апрелья 1898 года.

հետքերը հալկական տնտեսութեան, ուրեմն և արհեստագործութեան վրայ:

Այդպիսի մի հետազոտութիւն պահանջում է աւելի հմտութիւն և աւելի լարմար ժամանակ (մանաւանդ լարմար տարեշրջան), ուստի և ես ապագային եմ թողնում նրան: Իսկ այժմ ի նկատի ունիմ, ձեռքի տակ եղած նիւթերից օգտուելով, կարճ, բայց սխտեմատիկական կերպով նկարագրել, թէ ինչ եղանակներով են պատրաստում հայերը հում նիւթից իրանց հարկատր առարկաները, ըստ որում ի հարկէ իմ խօսքը վերաբերում է աւելի հին ձևերին:

Իմ աշխատութեան համար ես օգտուել եմ չորս տեսակ աղբիւրներին:

- 1) Այն ղլտողութիւնները, որ ես արել եմ իմ կեանքում ընդհանրապէս և վերջին տարիներս առանձնապէս:
- 2) Մի շարք նամակներ, որոնցով իմ ծանօթները, համեմատ իմ պահանջներին, տեղեկութիւններ են հաղորդել զանազան տեղերի հայերի տնտեսութեան, և մանաւանդ նրանց արդիւնագործութեան մասին:
- 3) Իմ անձնական հարցումիորձը զանազան տեղերի հայերից:
- 4) Գոյութիւն ունեցող գրականութիւնը նոյն առարկայի, կամ նրա հետ կապ ունեցող խնդիրների վերաբերեալ:

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Հայերի մեծագոյն մասը, որի հետ մենք իսկապէս գործ ունինք մեր աշխատութեան մէջ, և որը թուով մօտ երեք միլիօն է հաշոււմ, բնակոււմ է հետեւեալ՝ մասամբ բնական և մասամբ էտնօգրաֆիական սահմանների մէջ՝ Կովկասեան լեռնաշղթան, Կասպից ծովը, Իրանա-քրդական բարկասեան լեռնաշղթան, Կասպից ծովը, Սև ծովը և Վրաստանը *): Այդ երկրում հայերի հետ միասին բնակուած են նոյնպէս տաճիկները, քրդերը և ատրբէջան թրքերը: Ռուսական Հայաստանում (այսինքն Երևանի նահանգում) և Թիւրքա-Հայաստանի մի քանի մասերում, հայերը մեծամասնութիւն են կազմում **): Իսկ Տաճկա-Հայաստանի միւս մասերում և Անդրկովկասի արևմտեան կողմերում նրանք թէև մեծամասնութիւն չեն կազմում, այնուամենայնիւ նշանաւոր տոկոս են ներկայացնում:

Մինչև մեր դարի առաջին քառորդի վերջը ամբողջ լիշեալ երկիրը գտնոււմ էր կատարեալ շփոթութեան և անա-

*) Համարեա նոյն սահմաններն է դնում Հայաստանին Շօպէնը: «Հայաստան կոչուած երկիրը մի ժամանակ կազմում էր բաւական նշանաւոր պետութիւն 1500 վերստ երկարութեամբ (Նիքրատ գետի ավերից մինչև Քուռը ու Կասպից ծովը) և 1200 վերստ լայնութեամբ (Ազգերի երկրից, Կօլխիդից, Կովկասեան լեռնաշղթայից ու Իբէրիայից մինչև Գիարբէքիբի սահմանները): Шопенъ. Историч. Памятн. Стр. 1.

***) Հայերը ամենախիտ կերպով գտնոււմ են. Ալէքսանդրապօլում 91%, Ախալքալաքի գաւառում 76%, Նոր-Քալաղէտի ու էջմիածնի գաւառներում 64% և Շուշուայ գաւառում 58%: (Отчетъ Импер. Георг. Общ. XVIII).

պահովութեան մէջ: Հայերն էլ ամեն կողմից հալածուած էին որպէս գեաւուրներ: Ոչ մի հայկական գիւղ, ոչ մի հայաբնակ քաղաք խաղաղ, ապահով գոյութիւն չունէր: Գիւղեր ու քաղաքներ քարուքանդ անելը տաճկաց կամ պարսից զօրաց ձեռքով, կամ թէ նոյն իսկ մահմեդական ազգաբնակութեան ձեռքով, առօրեայ երևոյթներ էին: Միայն իրանց տնտեսական գործունէութեամբ էին կարողանում պահպանել հայերը իրանց գոյութիւնը, ըստ որում քարուքանդ արածը նորից վերականգնում էին ժամանակի ընթացքում: Բայց տնտեսական կեանքի մէջ դեռ լաւաջադիմական քայլեր անելը անհնար էր:

Սկսած մեր դարի սկզբից երկրի մի քանի մասերը փոքր առ փոքր անցան ռուսաց ձեռքը, ռուսի և հնարաւոր եղաւ աւելի ապահով ապրել և աւելի արդիւնաւէտ կերպով տնտեսութեամբ պարապել: Եւ իսկապէս էլ, այն ժամանակից սկսած, հայ ժողովրդի տնտեսական դրութիւնը օրէցօր բարւոքուեց:

Սրա հակառակ, Տաճկական Հայաստանում դեռ մինչև օրս շարունակուում է կայքի և կեանքի անապահովութիւնը: Այստեղ հայերը ոչ միայն տնտեսապէս չեն լաւաջադիմում, այլև Բերլինի կոնգրէսից սկսած, մինչև անգամ անհերքելի կերպով յետադիմում են, որովհետև մահմեդական ազգաբնակութեան ֆանատիկոսութեան հետ, միացել է կառավարութեան կորստաբեր քաղաքականութիւնը, որի նպատակն է հայերին ստիպել երկրից դուրս գալթել, կամ թէ տեղն ու տեղը բնաջինջ անել: Այդպիսի հանգամանքներում ի հարկէ տնտեսութիւնն էլ իւր բոլոր ճիւղերով մնում է առանց զարգանալու:

Սոյն ասպարիգում ռուսական հայերի մէջ վերակազմութիւն է կատարուում: Արդիւնագործութեան ազգային ձևերը չեն կարողանում մրցել մօտեցող եւրոպական քաղաքակրթութեան հետ, ռուսի և մեծ մասամբ անհետանում են, իսկ փոքր մասամբ որոշ չափով կերպարանափոխուելով, այնուամենայնիւ պահպանում են իրանց գոյութիւնը:

Բոլոր վերև լիշուած հանգամանքները պայմանաւորում են հայ ժողովրդի տնտեսութիւնը, որի մէջ կարելի է նկատել երեք գլխաւոր շրջաններ:

1) Հայ ժողովրդի մեծագոյն մասը զբաղուած է երկրագործութեամբ, որը դեռ կատարուում է հին, նախնական եղանակներով: Միայն ռուսաց հայերի մէջ նկատուում են դէպի նոր ձևերը անցնելու փորձեր:

2) Քաղաքային ազգաբնակչութիւնը պարապուում է արհեստագործութեամբ, որ դեռ բազմիցս հին տեղական ձևերով է կատարուում:

3) Գոյութիւն ունի վաճառականների մի նշանաւոր դասակարգ, որը տեղական հում նիւթերը հաւաքում և արտահանում է և սրա փոխարէն եւրոպական արհեստագործութեան արդիւնքները ներմուծում է և երկրի մէջ տարածում:

Սակայն աւելի մեծ քաղաքներում և հում նիւթերի առատ եղած տեղերում սկսել են յառաջ գալ արհեստագործութեան եւրոպական ձևերը, որոնք միանալով ներմուծուող ապրանքների հետ, մրցում են տեղական արդիւնքների հետ և սպառում նրանց բնաջինջ անել, և կամ առնուազը յետ են մղում նրանց: Բայց այդ պրօցեսը դեռ իւր գագաթնակէտին չէ հասել, ռուսի և բոլոր հին ձևերը դեռ շատ տեղ գոյութիւն ունին:

Ինչ վերաբերում է յատկապէս արհեստագործութեանը, այստեղ էլ մենք կարող ենք զանազանել երեք տեսակ տնտեսութիւն, նայելով թէ ով է աշխատութեան պարագլուխը:

1) Ընտանիքի մի անդամը մասնաւորապէս արհեստագործութեան վարողն է: Արհեստագործութիւնը կատարում է ընտանիքի մէջ: Այդ ձևը գիւղական ազգաբնակչութեան մէջ սովորականն է և շարունակուում է փոքր քաղաքներում, թէև մասամբ կերպարանափոխուած, իսկ մեծ կամ

քաղաքակրթուած քաղաքներում համարեա բոլորովին անհետանում է:

2) Չեռնարկութեան գլխին կանգնած է վարպետը: Այդ ձևը գիւղական կեանքում զեռ սաղմային զրութեան մէջ է: Փոքրիկ քաղաքներում զարգանում է նա իւր բոլոր ուժով և արդիւնագործական ասպարիզում գլխաւոր դերն է խաղում: Իսկ շփուելով զբոսից եկող քաղաքակրթութեան հետ, թուլանում է նա և գնում է դէպի անկումը:

3) Վերջապէս արդիւնագործութեան պարագլուխը, սեփականատէրը, հանդիսանում է զրամատէրը, որը շատ անգամ ինքը արհեստաւոր չէ, բայց և այնպէս կարողանում է բաժանել գործը և հսկել նրա վրայ և շահագործել իւր օգտին:

Արդիւնագործութեան յիշեալ երեք տեսակները կը նկարագրենք առանձին-առանձին գլուխների մէջ:



ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ.

ԳԻՒԿԱՍՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.

Ընտանիքի արհեստագործութիւնը իւր որակութեամբ և քանակութեամբ պայմանաւորւում է ընտանիքի ընդհանուր կեանքով: Ուստի նախ քան նրա արհեստագործական աշխատութիւններին անցնելը, ծանօթանանք գիւղացու ընտանեկան կեանքի հետ ընդհանրապէս: Մենք ի նկատի ունինք զուտ գիւղական ընտանիքները, որոնք գտնւում են քաղաքի ազդեցութիւնից տակաւին ազատ մնացած գիւղերում *): Իսկ ընտանիքի մասին խօսելուց առաջ պիտի գաղափար ունենանք առհասարակ հայկական գիւղի մասին:

Հայկական գիւղը ընկած է շատ անգամ որևէ լեռնային մակերևոյթի վրայ, կամ մի ձորի մէջ: Սրա առաջին պատճառը հայոց աշխարհի խորդուբորտ մակերևոյթն է, բայց սրան միւս կողմից նպաստում է կեանքի անապահով զրութիւնը: Նմանօրինակ հանգամանքների պատճառով, տները չեն կազմում կանոնաւոր շարքեր, այլ անկանոն կերպով ցրուած են, շատ անգամ էլ այնպէս, որ մի տան կտուրը

*) Անշուշտ մանաւանդ այդպիսի գիւղերն ի նկատի ունի սլ. Ղորղանեանց, որ գանգատւում է ասելով. «Մեր աշխարհը մեր ամբոխով հանդերձ զեռ շատ հեռու է մեր իդէալներից, մեր չարս կողմը թանձր տգիտութիւն է. ժողովուրդը աղքատ, բարքերը, ընդհանրապէս, նահապետական, ամէն մի աւան ապրում է իր սովորութիւններով, իր ճաշակներով, իր չարն ու բարով... Մեր երկրի ամբողջ տարածութեան վրայ դուք ոչինչ ընդհանուր չէք գտնի, ամէն մի գիւղ իր առանձին կեանքն ունի, այդ կեանքը խիստ որոշ սահմաններ ունի, այդ շրջանները նոյնքան չին են, որքան և ինքը կեանքը» («Մշակ» 1896, № 66):

միւսի համար բակի տեղ է ծառայում: Հասկանալի է, որ այս դէպքում իսկական փողոցների մասին խօսք լինել չէ կարող: Գիւղացին անցուղարձ է անում բակերով և կտուրներով, որպէս իրան յարմար է թւում և ոչ ոք նրա դէմ չէ բողոքում: Ուստի և սրոշ, սահմանափակ բակեր չկան: Գիւղացին պատնէշներ չէ դնում իւր և հարևանի մէջտեղում: Իսկ պատնէշները կամ չափառները գտնուում են կամ այգիների, պարտէզների շուրջը, կամ գիւղի ծայրերում ընկած բակերում (արտաքին թշնամու դիմաց) *):

Գիւղի բնակիչների մէջ սովորաբար գոյութիւն ունին ջերմ փոխադարձ յարաբերութիւններ, թէև գիւղը ամբողջովին վերցրած՝ քիչ յարաբերութիւն ունի հարևան գիւղերի հետ, որովհետև ճանապարհները շատ անգամ դժուար և վտանգաւոր են: Իւրաքանչիւր հայ գիւղ ունի իւր մօտակայքում կիսավայրենի մահմեդական հարևաններ: Բացի այդ, Տաճկա-Հայաստանում մինչև օրս էլ, իսկ Անդրկովկասում մինչև վերջին տասնամեակները, կառավարութիւնը, օրէնքները սակաւ են կարողանում իրանց ապահովացնող ազդեցութիւնը իրօք արդիւնաւոր անել: Ահա թէ ինչու իւրաքանչիւր գիւղ ապրում է իւր առանձնացած կեանքով, որը արտայայտուում է մանաւանդ այն հանգամանքի մէջ, որ երբեմն իւրաքանչիւր գիւղ իւր սեպհական բարբառն ունի, և չնայելով որ ամենքն էլ հայերէն են խօսում, այ-

*) Համեմատութեան համար կը գնենք այստեղ Շօպէնի նկարագրութիւնը մեր դարի առաջին տասնամեակներից: «Ոչինչ աւելի տղեղ բան չկայ, որքան Հայկական նահանգի գիւղը. հողով ծածկուած փոսեր, առանց որևէ կարգի և միմեանցից բաժանուած գարշահոտ ազրակուցներով կամ ոչ պակաս հոտած լճակներով. փողոցները կամ շաւիղները ոլորում են բնակարան ներկայացնող հիւղերի կտուրներով. այդ է գիւղի ընդհանուր պատկերը: Աւելի ցածր տեղերում գիւղերը պակաս տղեղ են: Այլը զուարճանում է կանաչազարդ այգիներով և անտառներով, որոնք ծածկում են գիւղի մերկութիւնը, որպէս զարդարանք: Բայց կապիս բոլոր այդ գիւղերը միմեանց նման են (Шопенъ. Истор. Пам. Стр. 484).

նուամենայնիւ մէկ գիւղը միւսին հեշտութեամբ չէ հասկանում:

Այնուամենայնիւ համագիւղացի ընտանիքների մէջ, ինչպէս ասուեցաւ, տիրապետում է բաւական բարեկամական յարաբերութիւն: Իւրաքանչիւր գիւղացի և իւրաքանչիւր ընտանիք միշտ պատրաստ է իւր համագիւղացիներին գործով և խորհրդով օգնական հանդիսանալու: Որպէս օրինակ, կարող ենք առաջ բերել հետևեալ սովորութիւնը: Հարիւր ընտանիքից բաղկացած մի գիւղում կան օրինակ 20 նիւթապէս աւելի ապահով ընտանիքներ, որոնք սեպհական գուլթան ունին, սրովհետև վերջինս բաւական թանգ է արժեքում: Իւրաքանչիւր գուլթանատէր կարող էր իւր գուլթանից առանձին արդիւնք ստանալ (վարձով տալ և այլն): Սակայն այդ չէ տեղի ունենում նահապետական գիւղերում: Միւս կողմից մի գուլթանը պիտի ունենայ 10-12 գլուխ անասուններ *), որը նոյնպէս հազիւ ընտանիքներ կարող են ձեռք բերել: Եւ ահա գուլթանատէրը հարաքաշ է կազմում մի շարք ուրիշ ընտանիքների հետ: Իւրաքանչիւրը սրանցից ներկայանում է իւր ունեցած անասուններով: Այնպէս որ, հարաքաշի անդամների մասնակցութիւնը համահաւասար չէ: Բայց և այնպէս՝ հարաքաշը հերկում է իւր բոլոր անդամների հողերը: Այս դէպքում ուշադրութեան է առնուում մասնակցող ոյժերի (մարդ թէ անասուն) թիւը, իսկ գուլթանը շատ անգամ հաշւի չեն գցում: Հետաքրքիրը և ընկերասիրականը այստեղ այն հանգամանքն է, որ իւրաքանչիւր գուլթան ունեցող միանում է միայն գուլթան չունեցողների հետ և այնպէս կազմակերպում են միութիւնը, որ ամենաազգատ գիւղացու գործն էլ գլուխ է գալիս:

Այս օրինակից տեսնում ենք մենք նախ, որ գիւղացի-

*) Գուլթանով աշխատելը դժուար գործ է. խիստ մեծ ու տգեղ գուլթանին լծում են երբեմն 14 զուլ կը կամ գոմէշ. չորս տղամարդիկ անխնայ կերպով քշում են անասուններին, իսկ հինգերորդը գուլթանն է կառավարում: (Шопенъ. Истор. Памятн. Стр. 737).

ները հարկաւոր դէպքում կարողանում են միացնել իրանց ութերը, իսկ միւս կողմից, որ հարուստները բաւական եղբայրաբար են վերաբերում դէպի իրանց աղքատ համագիւղացիները: Նոյնը երևում է և հետևեալ հանգամանքից:

Իւրաքանչիւր գիւղում կան միքանի «մեծ օջախներ» *): Սրանք աւելի մեծ և աւելի ապահովուած ընտանիքներն են: Պէտք է նկատել, որ գիւղական ընտանիքի մեծութիւնը և նիւթական ապահովութիւնը համարեա միշտ միմեանցով պայմանաւորուած են: Երբ ընտանիքը մեծ է, նա ապահովուած էլ է և ընդհակառակն: Այդպիսի ընտանիքները պահում են իրանց արժանաւորութեամբ, և սրա համեմատ էլ յարգանք են ստանում համագիւղացիներից: Գիւղացու աչքին մեծ նշանակութիւն ունի մեծ օջախի որդին կամ աղջիկը լինելը: Եթէ որեէ գիւղացի պատահամբ հարստանում է, բայց իւր վարմունքի, բնաւորութեան մէջ մութը կէտեր է ունենում, ապա այդ տխուր հանգամանքը բացատրում են ասելով, թէ նա իսկական օջախի սերունդ չէ: Գիւղացու այդպիսի հայեացքը մեծ օջախների վրայ, անշուշտ աւաջ է գալիս նրանից, որ մեծ մասամբ մեծ օջախները բարեկամաբար են ապրում միւս գիւղացիների հետ:

Այժմ անցնենք առանձին ընտանիքին:

Արտաքին աննպաստ հանգամանքների ազդեցութեան տակ, հայ գիւղացին սովորել է մխիթարութիւն սրունել իւր ընտանիքի գրկում: Վերջինս իւր զուտ զրութեան մէջ ներկայացնում է մի նախահայրական միութիւն, որը ունի չորս

*) Շատ անգամ մարդ գարմանում է, մտնելով մի մեծ գիւղական ընտանիք. նա բաղկանում է քսան, երեսուն և երբեմն քառասուն հոգուց. — դա մի փոքրիկ պետութիւն է, որի մէջ տիրում է խորին ներդաշնակութիւն: Ալևոր պապերը դարեւոր հասակներով — թուով մի քանի եղբայրներ — դեռ կենդանի են. կենդանի են և ծերունի պառւանները: Նրանց շրջապատել են որդիները, թուները, ծուները, — մի քանի սերունդ իրանց կնիկներով և զաւակներով: (Րաֆֆի. Հայ կինը. եր. 9):

Տես նույնպէս Միրախորեանց Ճանապարհորդ. հատ. II եր. 26:

անխուսափելի սկզբունքներ: 1) Հնագանդութիւն և յարգանք ընտանիքի բոլոր անդամների մէջ: Իւրաքանչիւրը հնագանդ պիտի լինի իրանից տարիքաւորներին, իսկ հաւասար դէպքերում իգական սեռը պիտի հնագանդի արականին: Միայն թէ այդ հնագանդութիւնը գինուորական խրատութիւն չունի, այլ կակուղ, զիջողական բնաւորութիւն է կրում: 2) Ամօթխածութիւն *): Ընտանիքին պատկանող կնամարդը պիտի թագցնէ իւր դէմքը հասակաւոր տղամարդկանցից (էլ աւելի խստութեամբ օտարներից) և հարկաւոր դէպքում տղամարդկանց հետ պէտքէ ոչ թէ ձայնով, այլ գրելի շարժումներով խօսի. նոյն իսկ ջահիլ կնամարդիկ պառականանցից նոյնպէս պէտք է թագնուին և անխօս մնան: 3) Մանաւանդ յատուկ է գիւղական ընտանիքին ամենալուրջ ողջախոհութիւնը **), որը անպայման կերպով պիտի պահպանուի: Անժուժկալութեան մէջ մեղադրուած կինը այլ ևս հնար չունի գիւղում մնալու: Նոյնպիսի ողջախոհութիւն պիտի ունենայ և տղամարդը: 4) Վերջապէս ընտանիքը ու-

*) Մանաւանդ խիստ ամօթխածութիւն է պահանջուում աղջիկներից: «4—5 տարեկան հասակում նրան արգելում են տղաների հետ խաղալ (եր. 13): Աղջիկը աչժմ 13—14 տարեկան է: Այդ տարիներում հատուցանում է նա և մենակ տնից դուրս չեն թողնում: Նա գնում է այգին, պարտեզը, դաշտը, մօր հետ միասին կամ տան հարսներից մէկի հետ: Միշտ երկու հսկող աչքեր անպակաս են նրա մօտից: Նա գնում է աղբիւրից ջուր բերելու հարեանների աղջիկների հետ. միքանիսը միայն հաւաքում են և խումբ են կազմում, դրա համար որոշուած են վաղ առաւօտեան և երեկոյեան պահերը, երբ փողոցները զատարկ էին մարդիկներից» (Րաֆֆի, Հայ կինը. եր. 13 և 17):

**) Կնոջ համարձակ նախուածքը, մի բառը օտար տղամարդի հետ, խոսքն բամբասանքի առարկա է դառնում: Ամուսնական անհաւատարմութիւնը խիստ հազուագիւտ է գիւղերում, և եթէ լինում են օրինակներ, պատժում են մահով. խանդոտ տղամարդը ծածուկ կամ զայտնի սպանում է նրան, և հասարակաց կարծիքը արդարացնում է այդ եղեռնագործութիւնը: Իսկ եթէ ամուսինը համբերում է կնոջ անառակութեանը, նրա ընտանիքը դուրս է ձգում պիւղական հասարակութիւնից (Րաֆֆի, Հայ կինը. եր. 28):

նի և կրօնականութիւն (կրօնասիրութիւն), որը սակայն զուրկ է տեսական-գիտակցական հիմունքներից, որպէս լինում է օրինակ գերմանական-բողոքական ընտանիքների մէջ: Հայ-գիւղացին աւետարան չէ կարգում և քարոզներ չէ լսում: Շատ անգամ նա տեղեկութիւն չունի Մովսէսի գրքերի կամ Եսայի մարգարէութիւնների մասին: Մինչև անգամ շատ գիւղական քահանաներ ճիշտը չը գիտեն, թէ արդեօք Գաւիթ Մարգարէն է առաջ եղել, թէ Քրիստոս: Այնուամենայնիւ գիւղացին զերծ չէ քրիստոնէական զգացմունքից: Նա հաւատում է հանդերձեալ կեանքին, բայց առանձին ուշադրութեամբ չէ մտածում նրա մասին: Քրիստոնէական կրօնը նրա աչքին երկու գլխաւոր կողմ ունի. եղբայրասիրութիւն և ողջախոհութիւն: Նա պաշտում է սուրբերին, զոհ է բերում նրանց համար, տօնում է նրանց յիշատակը, որովհետև նրանք մարգասեր և ողջախոհ կեանք են վարելիս եղել:

Մենք խօսեցինք ընտանիքի մշտակալ յատկութիւնների մասին: Այժմ տեսնենք, թէ ինչպիսի փոփոխութիւններ (շարժումներ) են տեղի ունենում ընտանիքի կեանքի մէջ: Այստեղ նկատում են երկու զոյգ իրար հակառակ շարժումներ, որոնցից մէկ զոյգը ձգտում է փոքրացնել ընտանիքը, իսկ միւսը—մեծացնել: Առաջին զոյգը կազմում են ընտանիքի որևէ անդամի մահը և աղջիկներից մէկի պսակելը: Երկրորդ զոյգը—ծնունդը և տղաներից մէկի ամուսնութիւնը: Որևէ անդամի մահը, մանաւանդ տարիքաւորներից, բնական է համարում և քառասունքը անցնելուց յետոյ, մոռացութեան է տրւում. այսինքն ամենքը նուիրում են իրանց առօրեայ հոգսերին, թէև հանգուցեալի յիշատակը միշտ պահում է: Աղջիկ պսակելը կատարում է մի որոշ բաւականութիւն զգալով: Ընտանիքը զգում է, որ մի բեռից ազատուեց: Այդ երևոյթի պատճառը տնտեսական է: Բայց թիւրքաց-Հայաստանում կան և ուրիշ կարևոր պատճառներ... Բաւական ենք համարում նկատել, որ թէև հայ գեղջկուհին շատ աշխատասէր է, այնուամենայնիւ, որտեղ

երկիրը անապահով է, նա շատ անգամ մի բեռն է կազմում գիւղացու համար: Գիւղական կնամարդը հազիւ է կարողանում գիւղից հեռանալ, ուստի և չէ կարող բաւականաչափ մասնակցել դաշտային աշխատանքներին, որը գիւղացու համար առաջին տեղն է բռնում: Ի հարկէ դաշտային աշխատանքներից հեռու մնալով, հայ գեղջկուհին առել է իւր ձեռքը տնային աշխատանքը: Ուստի մշտապէս ընտանիքին պատկանող կնամարդը համարում է որպէս մի օգտակար անդամ: Իսկ մի չափահաս աղջիկ, որի դիրքը ընտանիքի մէջ ժամանակաւոր և տնհաստատ է, պէտք է ըստ կարելոյն վաղօրօք հեռացնուի ընտանիքից, մանաւանդ որ նա պէտք է տեղ բաց անի սպասուելիք հարսների համար:

Ընտանիքի որդիները նոյնպէս վաղ են ամուսնանում: Այդ հանգամանքը երկու պատճառ ունի: Նախ որ ծնունդները, քանի դեռ կենդանի են, կամենում են տեսնել իրենց թոռներին և երկրորդ՝ այդպիսի վաղօժամ ամուսնութիւնը գործադրում է իբր ժուժկալութեան նպաստաւոր միջոց: Երիտասարդ գիւղացին, մինչև ամուսնանալը նոյնքան անարատ է, որքան իր հարսնացուն: Որդուն ամուսնացնելու հարցը սովորաբար ծնողներն են զարթեցնում: Որդու կամքը հազիւ են հարցնում. նա իրան բախտաւոր պիտի համարէ, եթէ պատահամբ կամ երեխայ ժամանակից, ծանօթ է եղել հարսնացուի հետ: Հակառակ դէպքում պիտի ծանօթանայ նրա հետ միայն պսակադրութիւնից յետոյ: Գա ի հարկէ, ամօթխածութեան և նահապետական հնազանդութեան մի չափազանցութիւնն է:

Տղայ զաւակի ծնունդը շնորհաւորում են ուրախութեամբ. ինչ որ տեղի չէ ունենում՝ եթէ ծնուած երեխան աղջիկ է: Սբա պատճառը պարզում է վերոյիշեալ հանգամանքներով:

Իւրաքանչիւր ընտանիքի մէջ տեղի ունեցող վերջին փոփոխութիւնը որ կատարում է, դա նրա քայքայելն է: Ծնողների համար շատ տխուր բան է, եթէ դեռ իրանց կենդանութեան ժամանակ որդիները բաժանում են մի-

մեանցից: Այդ հանգամանքը անբախտութիւն է համարուում: Սովորաբար ընտանիքը բաժան-բաժան է լինում, երբ նրա օճախը երեք սերունդի հասել է: Այս դէպքում ընտանիքի բոլոր շարժական կայքը բաժանուում է եղբայրների մէջ: Հայրենական խրճիթը հասնում է անդրանիկ որդուն, որովհետեւ նա է համարուում ծնողական օճախի ժառանգը: Օճախը, որ գոյութիւն ունի իւրաքանչիւր գիւղական խրճիթում, համարուում է ընտանեկան սրբութիւն: Հարկաւոր դէպքում երգուում են նրանով, օրհնում են և երբեմն էլ անիծում են նրան: Ուստի իւրաքանչիւր եղբայր կամենում է ըստ կարելոյն՝ մօտ ապրել օճախից: Այդ պատճառով էլ երկրորդ եղբօր իբր բնակարան՝ յատկացնում են նախկին գոմը, որ կպած է խրճիթին: Երրորդի համար էլ, ընդհանուր աշխատանքով մի նոր տուն են շինում նոյն բակում (միայն ծայրահեղ դէպքերում՝ որևէ ուրիշ տեղ)... Իւրաքանչիւր նոր օճախ հիմնող եղբայրը իւր առաջին կրակը վերցնում է հայրական օճախից:

Բաժանելու գործողութեան մասնակցում են գիւղի կարևոր անձնաւորութիւններն ևս: Այն կայքերը, որոնք բաժանելի չեն (օրինակ ջրաղացը, գութանը) կամ գնահատուում են և կամ մնում անբաժան, որպէս ընդհանուրի սեփականութիւն:

Մինչև ընտանիքի բաժանուելը, նրա մէջ առանձին-անհատական սեփականութեան մասին խօսք չէ կարող լինել: Միայն հազուատն է, որ այս ու այն անդամի մասնաւոր սեփականութիւնն է համարուում: Նոյն իսկ այդ էլ ո՛չ միշտ: Եստ անգամ մի ձեռք կարգին հազուատը հազնում է եղբայրներից մէկը կամ միւսը, նայելով թէ նրանցից որը պատահամբ պէտք ունի:

Այսպէս, գիւղական ընտանիքի յատկութիւնների հետ ծանօթանալով, մեզ համար այժմ աւելի հասկանալի կը լինի նրա արհեստագործութիւնը, ընտանիքը ձգտում է

իրեն հարկաւոր պիտոյքները ըստ կարելոյն սեփական միջոցներով (սեփական նիւթերից, սեփական գործիքներով և սեփական ոյժերով) պատրաստել: Այդ ձգտումը առաջ է գալիս մի քանի պատճառներից: Նախ որ գիւղական ընտանիքը ունի սովորաբար բաւականաչափ, երբեմն էլ մեծ քանակութեամբ հում նիւթեր, որոնք ճանապարհների աննպաստ հաղորդակցութեան պատճառով, կարող են անօգուտ մնալ: Միւս կողմից գիւղական ընտանիքը բաւական ազատ ժամանակ և ոյժեր ունի, մանաւանդ ձմեռը. կանայք համարեա ամբողջ տարին կարող են առարկաներ պատրաստելով զբաղուել, որովհետև շատ չեն խառնուում դաշտային աշխատանքներին: Երրորդ՝ ընտանիքի բազմանդամութիւնը տնտեսապէս ձեռնառու է դարձնում շատ արգիւնքների պատրաստութիւնը: Չորրորդ՝ գիւղական ընտանիքը անբաւարար հաղորդակցութեանց պատճառով, յարմարութիւն քիչ ունի՝ հարկաւոր առարկաները շուկաներից ձեռք բերելու համար:

Եւ ահա իւր նպատակին հասնելու համար, գիւղական ընտանիքը իւր տնտեսութիւնը հիմնում է ընդհանրապէս և արհեստագործութիւնը մասնաւորապէս՝ երկու սկզբունքների վրայ:

1. Ընտանիքի իւրաքանչիւր անգամը պարտաւոր է իւր ոյժերին համապատասխան կերպով մասնակցել ընտանիքի տնտեսութեան:

2. Եթէ որևէ դէպքում ընտանիքի ոյժերը անբաւարար են, նա առանց այլևայլի անվարձ օգնութեան է կանչում համագիւղացիներին, որից վերջիններս չեն հրաժարուել, որովհետև իրանք էլ ուրիշ անգամ նմանօրինակ դրութեան մէջ են լինում և առհասարակ, ինչպէս արդէն նկատել ենք, գիւղացիների մէջ փոխադարձ պաշտպանութիւնը արմատացած սովորութիւն է:

Արհեստագործական աշխատութեան պարագլուխը երբեմն կինն է լինում, երբեմն տղամարդը: Կնոջ գործն է գլխաւորապէս տնային հիմնական առարկաների և առօրեայ

88601

սպառուող պիտույքների պատրաստութիւնը, բացի փայտեղէնից, կաշեղէնից և սրանց նման կոշտանիւթ առարկաներից: Իսկ տղամարդի արհեստագործութեանն են վերաբերում չիշեալ կոպիտ առարկաներն և գիւղատնտեսական գործիքները, որոնք համարեա միշտ կարծր նիւթերից են պատրաստուում:

Ա. ԿԱՆԱՆՑ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ:

Այս դէպքում ի հարկէ գործ կատարողն շատ սնգամ ոչ թէ կանանցից մէկն է լինում, այլ ընտանիքի բոլոր կինարմատները, որոնք գործում են ընդհանուր ոյժերով և հարկաւոր դէպքում նոյն իսկ երեխաներին էլ մասնակից են անում: Երբեմն էլ օգնութեան են գալիս ընտանիքի արական անդամները, երբ օրինակ, հեռուից պէտք է հում նիւթ բերել: Իերենք մի շարք օրինակներ:

Հաց թխելը ամենատարածուած և ամենահարկաւոր աշխատութիւնն է ընտանիքի մէջ: Գիւղական կեանքում, մանաւանդ դեռ յետ մնացած գիւղերում, մսեղէն կերակուրներ սակաւ են գործածում: Գիւղացու ամենագլխաւոր կերակուրը հացն է: Ցամաք հաց ուտելը քաղաքում բացառիկ երևոյթ է, իսկ գիւղում շատ սովորական: Ուստի գիւղական ընտանիքին միշտ հարկաւոր է ունենալ բաւարար քանակութեամբ հաց, այն էլ որքան կարելի է թարմ:

Հաց թխելու գործողութիւնը կատարում է օրինակ, հետևեալ ձևով: Գեղջկուհին խմորը հուսնում է տախտակեայ տաշտի մէջ, ուր խմորին խառնում են թթուխմոր: Երբ խմորը հասունացած է լինում (հացը եկած է լինում), գեղջկուհին նրանից պիւլնը (գնդեր) է շինում: Այդ միջոցին, մի կողմից թոնիրը վառում են և լաւ տաքացնում: Ապա, կանանցից մէկը նստում է թոնիրի մօտ, իսկ աւելի ջահիլները կամ երեխաները հետզհետէ պիւլնը բերում են թոնիրի կողքին: Թխողը դնում է պիւլներից մէկը մի տախտակի վրայ, «բացում է» (տափակացնում է) նրան և կպցնում

թոնիրի պատին (թխում): Ամեն մի հացը թխելիս, նա կռանում է դէպի թոնիրը: Երբեմն թոնիրի մօտ նստում են երկու կանայք, նրանցից մէկը պիւլնը է բացում, իսկ միւսը թխում: Երբ հացը կարմրում է, հանում են նրան մէկ մէկ և շարում խրճիթի պատերի տակ՝ սառեցնելու:

Հացից յետոյ, գիւղացու կարևոր կերակուրն է կաթնեղէնը առհասարակ և մասնաւորապէս պանիրն ու իւղը: Սրանց պատրաստութեան համար գիւղական ընտանիքները սովորութիւն ունին միմեանց կաթ փոխ տալու: Մի շարք ընտանիքներ, իրանց միքանի օրուայ կաթը փոխ են տալիս մէկ ընտանիքին, որն այդպիսով միանգամից հարկաւոր քանակութիւնը ունենալով, կարող է պանիր կամ իւղ պատրաստել: Ստացած կաթի քանակութիւնը չափում են մի փայտով, որ տնկում են կաթով լիքը ամանի մէջ և նշան անում նրա այն կէտում, որակը նա կպչում է կաթի մակերևոյթին: Հաւաքուած կաթը եփում են մի մեծ կաթսայում: Ապա ժողովում են կաթի երեսը (սերը) որից պիտի իւղ պատրաստեն. իսկ երեսը քաշած կաթի մէջ խառնում են «մէրանը», որը (օրինակ Երրակում) մի խառնուրդ է բոյսերից, թթու խմորից և այլն: Մէրանի ազդեցութեան տակ կաթը ստանում է մաճնային կերպարանք, որի երեսում գեղնագոյն «ջուր» է հաւաքում: Այդ «ջուրը» զգուշութեամբ դուրս են թափում: Ապա գեղջկուհին ձեռքը մտցնելով կաթսայի մէջ, հաւաքում է բոլորը և պանիրի կռում կազմում:

Իսկ եթէ կամենում են զօլ-պանիր ստանալ, գեղջկուհին ձեռքով պանիրի կռումի մէջ մի անցք է բացում, և ձեռքի վրայ պտտացնում է կռուճն այնպէս, որ վերջինս գնալով-գնալով՝ աւելի մեծ, բայց բարակ է դառնում. յետոյ կտրատում են զօլ-զօլ և աղում:

Երբեմն էլ շարունակում են աշխատութիւնը այդ ձևով և մի տեսակ պանրային թելեր պատրաստում: Այդպիսի պանիր պատրաստում են մեծ տօների համար կամ նուէր տալու նպատակով:

Իւղ պատրաստելու համար հաւաքած սերը աճում են

խնոցի մէջ, որը երկու չուանով կախ է արած առաստաղից: Երկու կանայք կանգնում են միմեանցից որոշ հեռաւորութեան վրայ այնպէս, որ խնոցը գտնուում է նրանց մէջ տեղում: Ապա սկսում են խնոցը ճօճել: Ժամանակ առ ժամանակ բացում են նրա բերանը և տեսնում, թէ արդեօք իւրը սկսել է գոյանալ: Հակառակ դէպքում շարունակում են տատանել, մինչև որ իւրը կատարելապէս որոշուում է: Ստացած թանը, ինչպէս յայտնի է, տալիս է մեզ նաև ազգային թանապուր կերակուրը:

Ուտելիքներից անցնենք այժմ խմիչքներին:

Ընտանիքը կարողանում է պատրաստել իւր համար օղի ևս: Մենք կը նկարագրենք այստեղ օղեսպտրաստութեան հասարակ տնային ձևը:

Օճախի վրայ դնում են մի պղնձեայ կաթսայ, որը մինչև կէսը լցրած է լինում «ջեջիով» (խաղողի մնացորդը՝ գինի հանելուց յետոյ): Կաթսայի մէջ տեղում դրած է լինում մի փոքրիկ անօթ: Կաթսայի վրայ դնում են մի պղնձեայ թաս. թասի յատակը պիտի փոքր ինչ կամարած լինի: Թասից կապում են խաչաձև բարակ պարան, որի ծայրը կախուած է լինում դէպի կաթսայում գտնուող անօթը: Ապա կաթսայի և թասի իրար կպած տեղը կաւով կամ խմորով ծեփում են, որպէս զի շոգին դուրս չգնայ: Թասի մէջ ածում են սառը ջուր, որը շուտ-շուտ փոխում են, որպէս զի կաթսայի յատակը շարունակ սառը մնայ: Կաթսայի մէջ գոյացող շոգին, կաշելով թասի սառը յատակին, հեղուկ է դառնում, որը կենդրոնանում է կախուած թելի վրայ և կաթկաթում անօթի մէջ: Այդ հեղուկը օղին է:

Ի միջի այլոց լիչենք, որ նոյն մետոդով պատրաստում են վարդաջուրը, որ գործադրւում է զանազան նպատակների համար: Հիւանդ աչքերին վարդաջուր են քսում: Ներքին հիւանդութիւն ունեցողներին թարմացնելու համար՝ վարդաջրով նուռ են ուտացնում:

Գիւղական ընտանիքը պատրաստում է նոյնպէս զանազան խեցեղէններ (ամանեղէն): Սրա համար կաւը ձեռք է

բերւում օրինակ, գետակների ավերից. բայց ամեն տեղ ոչ միւնոյն որակութեամբ: Մօտ տեղերից կանայք են բերում, իսկ եթէ տեղը հեռու է, տղամարդը իր սալով օգնութեան է հասնում: Կաւը լաւ թրջում են և ոտներով այնքան կոխատում, մինչև որ նա մաժուցիկ դառնայ: Այդ տեսակ պատրաստած կաւից գեղջկուհին շինում է մի շարք զանազան կրակարաններ, որոնց գլխաւորների մասին զաղափար կը տանք այստեղ:

Քուրան ներկայացնում է ներսը դատարկ մի ուղղահայեաց ցիլինդր, որի վրայ կաթսան են դնում: Հօրիգօնական միջնորմով քուրան բաժանւում է երկու մասի, որոնցից վերևինի մէջ են կրակ վառում: Միջնորմը ունի մի շարք ծակեր. նրանցով ներքևից վերև օդն է անցնում, իսկ վերևից ներքև թափւում է մոխիրը: Քուրայի վերևի մասը վերջանում է երեք բլրակներով, որոնք կրելով իրանց վրայ կաթսան, թոյլ չեն տալիս, որ նա իր բոլոր մասերովը կպչէ քուրային, որովհետև հակառակ դէպքում օդի շարժումը կը խանգարուէր և կաթսայի տակի կրակը կը հանգչէր: Ներքևում, առջևի կողմից, քուրան մի ծակ ունի, որտեղից դուրս է թափւում մոխիրը և ներս է մտնում հարկաւոր եղած օդը: Քուրան բաւական խորիմաստ գործիք է, որն անշուշտ արևելեան ժողովրդների փորձառութեան արդիւնք է: Ինչ էլ լինի, նա համապատասխանում է ֆիզիկայի ճշմարտութիւններին (օդի նշանակութիւնը՝ այրուելու երևոյթի մէջ):

Մանդալը մի կաւեղէն արկղ է, կաւեայ ոտներով, առանց խուփի: Լինում են զանազան տեսակի մանդալներ, բայց ընտանիքում աւելի գործածականը մեր նկարագրածն է: Լայնութեան պատերի վրայ երբեմն մատնաչափ խորութիւններ են լինում, շամփուրների ծայրերը կաթնեցնելու համար: Մանդալը գործածւում է գլխաւորապէս խորոված պատրաստելու համար: Ածուխը (կրակը) վառում է անմիջապէս մանդալի մէջ և շամփուրները շարւում են մէկ պատից դէպի միւսը:

Կաւից նոյնպէս շատ ուրիշ առարկաներ են պատրաստում. օրինակ փեթակներ ցորեն կամ ալիւր պահելու համար: Այդ փեթակների գլուխը բաց է, այդտեղից են ներս լցնում ցորենը կամ ալիւրը, իսկ քիչ քիչ դուրս են հանում ներքեւում գտնուող մի բռունցքաչափ ծակից, որը սովորաբար ծածկուած է լինում փոքրիկ բարձիկով կամ շորի կտորով:

Կաւից են շինում նոյնպէս թոնիրը, որը գիւղական տան անհրաժեշտ պիտոյքներից մինն է: Իսկ թոնիր շինելու մասին մենք գաղափար կը տանք յետոյ:

Թրճած կաւէ ամաններ շինելու համար գործ է ածուում աւելի նուրբ կաւ: Այդ գործն էլ շատ տեղերում գեղջիկուհին է կատարում: Նա դնում է իւր հանդէպ մի հասարակ տախտակ, նրա վրայ փափուկ կաւից ձողիկներ է շինում, որոնց երկարութիւնն և հաստութիւնը համապատասխան են շինուելիք ամանի մեծութեան և նրբութեան: Յետոյ տախտակի վրայ շինում է նաև մի շարք փոքր և մեծ շրջանակներ, որոնցից իւրաքանչիւրը մի անօթի յատակը պիտի դառնայ: Ապա, վերև յիշած ձողիկները փաթաթելով շրջանակի վերևի կողմից, հետզհետէ գոյացնում է անօթը, որը և հարթացնում է կաւախառն ջրով: Գործը կատարուում է ընդհատումներով, որպէս զի արդէն շինուած մասերը մի փոքր ցամաքեն: Երբ անօթները շինուած են լինում, դնում են նրանց տանը կամ գոմում՝ չորանալու: Թրճելու համար օգտուում են սովորական թոնիրից: Հացը թխելուց յետոյ, քանի որ թոնիրը առանց այն էլ տաքացրած է, զգուշութեամբ շարում են նրա մէջ անօթներն և թոնիրի բերանը ծածկում, որ օդ չանցնէ: Մի քանի օրից յետոյ անօթները թրճուած՝ դուրս են հանում թոնիրից:

Փսիաթներ են գործում կնիւներից (եղեգի ճիւղերից), որը քաղում են ձրիաբար ջրերի: Կփերում: ձիւերը նախ ջրի մէջ են դնում մի շաբաթ, ապա բերում են տուն հիւսում փսիաթներ, առանց որևէ գործիքի: Փսիաթը լինում է մեծ մասամբ 1 մէտր երկարութեամբ և 2 մէտր լայնութեամբ

և գործ է ածուում յատակի, երբեմն էլ խրճիթի առաստաղի համար: Տղամարդիկ էլ հիւսում են փսիաթներ:

Գերջակի *) սերմից ձէթ են հանում հետևեալ կերպով: Գեղջիկուհին աղանձում է սերմը հասարակ կաւէ ամանում օճախի վրայ, թափում է նրան մէկ երկայն քարի վրայ և փշրում մի ուրիշ քարի օգնութեամբ: Այդպիսով ստացուում է մի փափուկ նիւթ, որը նա ածում է ջրով լի և կրակի վրայ դրած՝ կաթսայի մէջ: Ձէթը յայտնուում է ջրի երեսին, որտեղից նրան հաւաքում են: Ձէթը գործ է ածուում վառելիքի համար:

Սապոնի և մոմի պատրաստութիւնը: Գիւղական ընտանիքները սովորութիւն ունին աշնանը մորթելու մէկ կամ մի քանի գլուխ տաւար, որոնցից բաստրմա են կազմում մեծաւայ համար: Ստացուած ճարպից պատրաստում են սապոն կամ մոմ: Գեղջիկուհին եփում է ճարպը կաթսայում, և երբ ճարպը կարգին հալուում է, հեռացնում է նրանից մսեղէն մասերը և ստանում մաքուր ճարպ: Սրա մէջ կալաքար (սօդա) ածելով, ստացուում է սապոն: Իսկ մոմ ստանալու համար, վերցնում են մի քանի ճիւղտներ, որոնց իւրաքանչիւրից կապում են մի շարք թելեր: Այդպէս նախապատրաստած ճիւղտները թաթախում են հերթով՝ հալած ճարպի մէջ: Թելերը ծածկուում են ճարպի շերտերով: Թաթախելը կրկնում են մի քանի անգամ, ուստի ճարպի շերտերը գնալով գնալով՝ հաստանում են: Այդպիսով ստացուած մոմերը ի հարկէ բաւական անտաշ կերպարանք ունին:

Կանանց ամենասովորական և կարևոր գործունէութիւնն է կազմում բրդեղէնի պատրաստութիւնը: Ամեն բանից առաջ բուրդը պէտք է փոքր ի շատէ նախապատրաստուի:

Բուրդը **) մի քանի ժամ թրջոց դնելուց յետոյ գետակում կամ տաշտի մէջ, լուանում են: Երբեմն ջրին խառնում են

*) Աբէլեանց. Իւղահանութիւնը Երևանի նահանգում, «Մշակ», 1884, № 28. ԴԼ. VI.

**) Хатисовъ. Кустарная промышленность въ Закавказьи Стр. 14.

փոքր ինչ տնային անասունների մէջ. կարծում են, որ դրանով բուրդը աւելի կակղում է և ճարպային նիւթերն աւելի շուտ են ջուկուում: Ապա փռում են բուրդը գետի քարածածկ ափի վրայ և ծեծում նրան թոխաջով (փայտով): Այդ գործին մասնակցում են երկու կանայք ևս, որոնցից մէկը շարունակ ջուր է ածում բրդի վրայ, իսկ միւսը անդադար ծեծում: Բուրդը լուանալուց և չորացնելուց յետոյ, սկսում են նրան անօսրացնել, այդպիսով մազմզուքը ջուկջուկում են և բուրդը մաքրում զանազան կեղտերից: Այդ գործը կատարում են առանց որևէ գործիքի, իսկ երբեմն էլ մի փայտի միջոցով:

Այդ կերպ նախապատրաստած բուրդը գործ են ածում օրինակ՝ անկողին լեցնելու համար և այլն: Իսկ եթէ ուրիշ նպատակ ունին, շարունակում են բրդի նախապատրաստութիւնը: Բուրդը նախ զգում են «սանդերքի» վրայ: Սա մի եռանկիւնի պրիզմա է, որի մի կողը փոքր ինչ տափակ է և մի շարք երկաթեայ ատամներ ունի: Գեղուց յետոյ, բըրդից թել են մանում ճախարակի օգնութեամբ:

Թելը գործ է դրւում հասարակ գուլպաների համար, որոնց գործում է գեղջկուհին միւլերով: Այդ գուլպաները թէև շատ էլ նուրբ չեն, բայց բաւական տաք են պահում ոտները:

Շատ անգամ թելը ներկում են զանազան գոյներով: Գիւղական ընտանիքը ստանում է ներկերը զանազան բոյսերից, ծաղիկներից, արմատներից և այլն և ներկելու գործն էլ կատարում է ինքը—գեղջկուհին, առանց մասնաւոր գործիքների:

Բրդի թելից գործում են շալեր, որոնք թէև կոպիտ, բայց շատ զիմացկուն են լինում: «Իեազգահ» շատ հասարակ, նախնական է և շինւում է իրանց—գիւղացոց ձեռքով (վարպետի կարիք չկայ): Յիշեալ շալերից գեղջկուհին հազուստ է պատրաստում ամբողջ ընտանիքի համար: Բացի շալից, պատրաստում են ընտանիքում նոյնպէս գորգեր, կապերտներ և այլն: Այս դէպքում գործադրուող գործիքները

նոյնպէս նախնական են և փայտից են շինած: Մի կտոր շալի վրայ աշխատում են մէկ կամ մի քանի կանայք՝ նայելով կտորի լայնութեանը: Գորգերն ու կապերտները տան յատակը ծածկելու համար են: Բացի սրանցից, պատրաստում են ջեջիմներ, մափրաշներ և այլն:

Մենք ի հարկէ միայն օրինակներ բերինք, ցոյց տալու համար, որ հայ գեղջկուհին անկախօրէն արհեստագործել գիտէ: Բայց այդ օրինակները դեռ բոլորը չեն: Առաջարկում ենք մեր այն ինտելիգենտ երիտասարդներին, որոնք գիւղական կեանքի հետ լաւ ծանօթ են, մանրամասն ուսումնասիրել այդ նիւթը:

Բ. ՏՂԱՄԱՐԴԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Գեղջկուհին միայն կողմնակի կերպով է մասնակցում բուն երկրագործական աշխատանքներին. այդ ասպարէզը գլխաւորապէս տղամարդին է պատկանում: Ուստի վերջինս Ժամանակ և ցանկութիւն քիչ ունի տնային գործերով զբաղուելու, մանաւանդ որ նա բաւական ճաշակ էլ չունի դրա համար: Բայց նա լաւ է հասկանում թէ ինչպիսի գործիքներ են հարկաւոր իրան՝ երկրագործական աշխատանքների համար, որպէս պէտք է պատրաստել կամ նորոգել, ինչպիսի սայլեր է հարկաւոր իրեն և այլն: Իսկ եթէ նա կամենում է տնային գործերին մասնակցել, այն Ժամանակ ընտրում է իւր համար աւելի կոշտ ու ծանր աշխատանք. օրինակ փայտից տնային կահ-կարասիք շինելը և այլն: Տղամարդն է գլխաւորապէս աշխատում նոյնպէս խրճիթը տունը շինելու վրայ: Բացի այդ՝ կաշեղէնը, մորթեղէնը և այնպիսի առարկաները, որոնց գործածողը տղամարդն է, նա ինքն է պատրաստում: Բերենք մի քանի օրինակներ:

Փայտեղէն գործիքները կամ կարասիքը շինում է գիւղացին սովորական հասարակ գործիքներով, որոնցից իւրա-

քանչիւր ընտանիք ունի. և կամ առանց որևէ գործիքի: Գիւղացին ըստ կարելոյն խոստաւում է սօսինձ, մեխ և սրանց նման միացնող միջոցներ գործածելուց: Առարկան շինում են կամ մի ամբողջ կտոր փայտից, կամ թէ մասերը հագցնում են միմեանց: Բնորոշ օրինակ կարող է համարուել խնոցը: Սրան ստանալու համար, գիւղացին վերցնում է մի կտոր գերան, կտրատում է գլանաձև և մէջը դատարկում: Այդպիսով ստացւում է մի խողովակ, որի մի ծայրը փակ է: Միևս ծայրին, որ բաց է, հագցնում են մի տախտակ, որը խիստ ճնշուած լինելով, ամուր փակում է բերանը: Ապա, գլանական մակերևոյթի վրայ, մէջ տեղում, մի անցք են բացում և ահա խնոցը սրտորաստ է:

Տիկեր կամ մօթալներ ոչխարի մորթուց: Ոչխարի գլուխը կտրելուց յետոյ, մարմինը (միան ու ոսկորները) զգուշութեամբ դուրս են հանում վզի միջով: Այդ գործողութիւնը հեշտացնելու համար, խողովակի միջոցով փչում են մորթու տակ, որից վերջինս ուռչում է և փոքր առ փոքր պոկւում է մսից: Ստացուած ամբողջ մորթին դարձնում են, աղում և չորացնում: Այդպիսի մորթիների մէջ պահում են պանիր: Նոյն կերպով հանում են եղջիւրաւոր կենդանիների կաշին, որոնք կազմում են գինու մեծ տիկերը:

Կօշիկներ և գլխարկներ: Գիւղացին վերցնում է մի կտոր հում (անպատրաստ) կաշի, դանակով մաքրում է մազերը և կտրում է նրանից մի զոյգ գարշապար, որոնց երկու կողմից ծակեր է բացում և սրանցից ամուր թել է անցկացնում: Այդպիսով նա ստանում է մի զոյգ, թէև շատ կուպիտ և հասարակ, բայց ձրի և յարմար ոտնամաններ, որ տրեխ է կոչւում: Տրեխը հագնելիս, ոտը դնում են գարշապարի վրայ և թելը քաշքշում ու ամրացնում: Ի հարկէ այդպիսի ոտնամանները պատրաստելիս՝ գեղեցկութեան մասին չեն մտածում:

Գլխարկը պատրաստում են ոչխարի մորթուց: Գիւղացին կտրում է մորթուց մի ուղիղ անկիւն կամ տրապեցիական քառանկիւն, որի կողմերը իրար մօտեցնելով կազմում է

գլան կամ կօնուս: Ապա ներքին կողմից ծածկում է գլխարկը կաւուով կամ մի այլ չթեղէնով:

Ածուխ: Գիւղացին բերում է այգուց կամ անտառից փայտ և իր բակում կտրատում է այնպէս, որ կտորները երկու տեսակ երկարութիւն ունենան, օրինակ մէկը լինում է 1 արշին, իսկ միւսը կէս արշին երկարութեամբ: Ապա բակում մի փոս է քանդում և հողը դուրս տալով պահում է, որովհետև յետոյ հարկաւոր է գալու: Փոսի լայնութիւնը լինում է օրինակ 4 - 5 արշին: Յետոյ փոսի կենդրոնում թաղում է մի գերան 2 - 5 արշին բարձրութեամբ: Գերանի շուրջը դնում է փոքր ինչ յարդ կամ չոր խոտ: Գերանի շուրջը, փոսի մէջ, շարում է (կանգնեցրած) կարճ փայտերը, յետոյ նրանց վրայից երկարները: Փայտակոյտի վրայ չոր յարդ է ածում և յետոյ ամբողջ շէնքսը ծեփում փափուկ հողով, այնպէս որ միայն ներքևի մասը բաց մնայ: Վերջապէս գիւղացին բարձրանում է այդ կոյտի գլուխը և դուրս հանում գերանը, և այդպիսով կազմուած խողովակի (գերանի տեղը) մէջը կրակ է գցում: Երբ կրակը մի փոքր վառւում ու տարածւում է, ներքևի մասն էլ հողով ծեփում է: Քիչ ժամանակից յետոյ խողովակի բերանն էլ յարդ է խըցկում և հողով փակում: Միայն տեղ-տեղ ճեղքեր է թողնում, որ օդը փոքր ինչ անցնել կարողանայ: Այդպէս մընում է միքանի օր, մինչև որ ճեղքերից այլ ևս ծուխ չէ դուրս գալիս. դա ցոյց է տալիս, թէ փայտն արդէն ածուխ է դարձել: Այժմ հողը հեռացնում են և ածխացած փայտերը անմիջապէս կտրատում են և ցրում, որովհետև դեռ ածուխը տաք է և հակառակ դէպքում կարող է բռնկուել (այրուել):

Մենք նկարագրեցինք ածուխ պատրաստելու աւելի զարգացած եղանակը: Սակայն յետ ընկած, մանաւանդ անտառներով, հարուստ տեղերում, կայ աւելի հասարակ միջոց: Ահա թէ սասունցիք ինչպէս են ածուխ ձեռք բերում:

«Երբ մի հին կօճղ դադարում է այլ ևս շառաւիղներ արձակելուց, նրան ուղղակի կրակ են տալիս, որ իրան-իրան

այրուի: Լեռնային կածաններով և ձորերով անցնելիս՝ դուք յաճախ կը հանդիպէք իրարու մօտ-մօտ այգալիսի հսկայ ջահերի, որոնք այրուում են հանդարտօրէն: Այնուհետև հանդ-
ցնելով՝ ածուխ են ստանում: Ի հարկէ՝ այգալիսով ածուխի ^{3/4} մասը կորչում է անօգուտ» (Արաքս, եօթ տ. Գլ. Ա. Ստուռն, եր. 74):

Տղամարդի և կնոջ արհեստագործութիւնը մի շարք օրի-
նակներով իրարից օրոշելուց յետոյ, մենք աւելորդ չենք հա-
մարում դնել այստեղ մի նկատողութիւն պ. Բալայեանցի յօ-
դուածից, որը թէև վերաբերում է երկրի մի մասին, բայց
կարող է նմուշ լինել առհասարակ հայ գիւղացու գործու-
նէութեանը: Նկատողութիւնը թէև խօսում է տղամարդի և
կանանց *խրաւունքների* սահմանների մասին, բայց հէնց այդ
սահմանները գաղափար են տալիս նաև տնտեսական գործո-
ղութեանց մասին:

«Եզր, ձին, գոմէշը, էշը, ջորին, գրանց բանեցնողը
տղամարդն է, կինը այդ կենդանիների հետ գործ չունի:
«Վովը. կաթնատու ոչխարը և գոմէշը, հաւը, կնոջ իրաւա-
սուլթեան տակ է, որովհետև այս կենդանիները տալիս են
կաթ, ձու, բուրդ, որոնց պատրաստողը կինն է»: «Յորեն,
գարի, հաճար, բրինձ, կարտօֆիլ ցանողը և պատրաստողը
մարդն է, ուստի այդ մթերքների լիակատար իրաւունքը
նրանն է (ծախելու), իսկ կաթը, մածունը, պանիրը, իւղը,
ձուն, թթուները, կանաչեղէնը, թխած հացը, լոբին, սի-
սեռը, սիմինդրը, գտնուում են կնոջ իրաւասուլթեան տակ»: Այն գործիքները, որոնց գործածողը տղամարդն է՝ կացին,
սղոց, բոհ, թի, եղան, հոսելի, կամն, լուծ, թով, մուրճ,
արօր, գուլթան, փոցիս, տափան, գերանդի, մանգաղ և այլն,
գտնուում են նրա անմիջական իրաւունքի տակ»: Իսկ այն
գործիքները, որոնց գործածողը կինն է, գտնուում են նրա
իշխանութեան տակ, օր. տաշտ, մաղեր, կաթսաներ, կճուճ-
ներ, անօթներ, սանդերք, ճախարակ, վիլահանք, խնոցք,

գորգ և կապերտ գործելու գործիքները, ինչպէս և գորգե-
րը, կապերտները, վերմակները, բարձերը, բուրթը, թելը
և այլն»: «Բրթից, թելից, բամբակից, վուշից գործուածներ
պատրաստողը կինն է, նոյնպէս ձեռողը և կարողը, ուստի
այդ բաների իրաւունքն էլ կնոջն է պատկանում»: (Գծեր
հայ գիւղացու կեանքից. Արձ. 96 թ. № 76):

Գ. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿՈՂՄՆԱԿԻ, ԲՍՅՅ ԱՆՎԱՐԶ
ՕԳՆՈՒԹԵՍՄԻ:

(Օրինակներ):

Ամեն մի գիւղացի չէ կարողանում սայլ շինել, թէկուզ
ամենահասարակ սայլ: Միայն գիւղի աւելի փորձառու ան-
հատներն են կարողանում այդ: Բայց սրանք օգնութեան են
հասնում իւրաքանչիւրին, առանց վարձ ստանալու: Երբ
գիւղացին կամենում է սայլ ունենալ, նախ ձեռք է բերում
փայտը, որը փոքր ինչ տաշում է, կարգի է բերում, ապա
հրաւիրում է փորձառու հարեանին, որը մի օրուայ ըն-
թացքում «կապում» է սայլը: Այդ փորձառուն նոյն օրը
հիւրասիրում է սայլատիրոջ տանը, եթէ միայն վերջինս
հարուստ է: Երբեմն էլ սայլ կապողը որևէ նուէր է ստա-
նում, օրինակ փոքր ինչ ծխախոտ: Բայց վերջիններս ան-
հրաժեշտ չեն և վարձատրութեան նշանակութիւն չունին:

Նոյնպէս խրճիթը կառուցանում է գիւղացին հարկա-
ւոր զէպքում ուրիշների անվարձ օգնութեամբ:

Խրճիթը շատ հասարակ է. նա ոչ իսկական պատու-
հաններ ունի, ոչ էլ առանձին բարդ մասեր: Մի դուռ և
մէկ բացուածք կտուրից. ահա բոլորը ինչ որ միացնում է
խրճիթը դրսի հետ: Այնուամենայնիւ հիմքը փորելիս, քարը
և փայտը ձեռք բերելիս, պատերը քաշելիս և կտուրը ծած-
կելիս պատրաստ են համագիւղացիները գործին մասնակցե-
լու: Ոմանք իրանց սայլով գնում են դաշտից քարեր հաւաքե-

լու, որոնելով սարից վայր գլորուած քարեր, կամ հաւաքելով գետի ափերից, կամ անտառից և սայլը լցրած՝ վերադառնում: Նոյն ձևով փայտը բերում են անտառից, իսկ եթէ գնում է փայտը ուրիշներից, ապա նրան կրելը կատարում են համագիւղացիները ձրիաբար:

Խրճիթի պատերը շատ հաստ են շինում. նախ մեծ և լաւ քարերից երկու զուգընթաց շարքեր են կազմում, ապա լցնում են շարքերի արանքը մանր քարերով և խոնաւ հողով: Նոյնպէս հասարակ, նահապետական ձևով ծածկում են կտուրը:

Մանաւանդ որոշ և բուռն կերպով մասնակցում են համագիւղացիները, երբ մի ընտանիք կամենում է թաղիք պատրաստել սեփական գործածութեան համար:

Գեղջկուհին լուանում և մաքրում է բրդի հարկաւոր քանակութիւնը. ապա հրուելիւմ են մի շարք ուժեղ երիտասարդներ, որոնց Ֆիզիկական ուժը անհրաժեշտ է թաղիքը շինելու համար: Ի միջի այլոց ընտանիքը պատրաստում է գինի, արաղ և փոքր ինչ ուտելիք:

Գործը կատարւում է գոմում, որից ժամանակաւորապէս հեռացրած են կենդանիները: Գոմի կտուրը պահուած է փայտեայ չորս սիւների վրայ, որոնք պատերից մի երկու քայլ հեռու են: Չորս սիւների մէջ եղած տարածութեան վրայ թաղիք են փռում: Սիւների աւելի հեռաւոր զոյգերը միացնում են երկու զուգընթաց չուաններով, իսկ աւելի մօտ սիւների արանքը ազատ է մնում: Փռած թաղիքի վրայ գցում են մի ջեջիմ, որի վրայ տարածում են բուրդ: Բրդի վրայ ջուր են սրսկում և ծածկում են երկրորդ ջեջիմով: Ապա սրա վրայ լայնութեամբ մեկնում են մի գլանաձև փայտ, որի շուրջը զգուշութեամբ փաթաթում են ջեջիմները իրանց միջում եղած բրդի հետ միասին: Ստացւում է մի հաստ պատատ, որի ծայրերը ամուր կապում են չուանով: Այժմ միմեանց դիմաց կանգնում են երկու տղամարդեր չուանով չմիացրած սիւների արանքում և բոլոր ուժով աքացում են պատատը, այնպէս որ վերջինս շարունակ գլոր-

ւում է լետ ու առաջ: Որպէս զի կարողանան աւելի սաստիկ աքացել, երկու երիտասարդները բռնում են գերանները միացնող չուաններից: Իսկ միւս երիտասարդները առ այժմ կոնծում են և ըխտիլաթ անում: Երբ տղամարդկանց մի զոյգը լողնում է, ապա նրան փոխարինում է երկրորդ զոյգը, իսկ առաջինը սկսում է հանգստանալ և կերուխումին մասնակցել: Ժամանակ առ ժամանակ բացում են պատատը, ջուր են սրսկում բրդի վրայ և կրկին փաթաթում ու գործը շարունակում: Աշխատանքը տևում է մի ամբողջ գիշեր: Եթէ կամենում են, որ թաղիքը շատ էլ հասարակ չլինի, երբ նա կիսապատրաստ է, գեղջկուհին կազմում է թաղիքի մակերևութի վրայ բամբակից կամ գունաւոր բրդից խաչեր, ծաղիկներ, տառեր, նկարներ և այլն, որոնք լետոյ ամրանում են թաղիքի մէջ:

Բերած օրինակներից տեսնում ենք, որ գիւղացիք հարկաւոր դէպքում օգնում են միմեանց ձրիաբար: Այստեղ ներգործութիւն ունի փոխադարձ օգնութեան սկզբունքը, որովհետև օգնութիւն ստացող ընտանիքի անդամները մի այլ անգամ իրանք էլ են գտնւում օգնողների շարքում: Բայց կան գիւղական կեանքում օրինակներ, ուր փոխադարձ օգնութեան սկզբունքը աւելի որոշուելով ու պարզուելով ստացել է ընկերակցական արդիւնաբերութեան կերպարանք: Կը բերենք սրա մի օրինակը:

Աւելի ամուր շէնքսի համար՝ գիւղացիք կիր են գործածում: Կիր ձեռք բերելու համար ընկերանում են միքանի գիւղացիներ, որոնք ընդհանուր աշխատութեամբ կիրը պատրաստում են և իրանց մէջ բաժանում:

Գործը հեշտացնելու համար ընտրում են այնպիսի տեղ, ուր աւելի հեշտ է քար և վառելիք (փայտը) հասցնել: Գետակի զառիվայր ափում մի փոս են քանդում, որի բերանը դարձրած է դէպի ջուրը, իսկ կտուրը ինքը եզերքն է: Այդ կտուրը 1—2 արշին հաստ է լինում. նրա մէջ բացում են խողովակաձև անցքեր օդի շարժման համար: Ապա փոսի մէջ քարեր են հաւաքում կամարաձև շարքերով, միայն

այնպէս, որ օղը կարողանայ նրանց մէջերով շարժուել: Քարերը չեն բռնում ամբողջ տարածութիւնը, այլ ազատ տեղ են թողնում վառելիքի համար:

Ընկերացած գիւղացիները միքանի օր մնում են այստեղ և հերթով հսկում, որ կրակը անդադար շարունակուի: Քարերը հաւաքում են գետակից, իսկ փայտը բերում են մօտակայ անտառից: Գործը վերջանալուց յետոյ, «գործարանը» անտէր են թողնում և նա հետզհետէ փչանում է:

Մենք ի նկատի ունէինք մինչև այստեղ, զուտ գիւղական ընտանիքը, որի վրայ քաղաքային կեանքը դեռ շօշափելի ազդեցութիւն չէ արել: Այդպիսի ընտանիքներ դեռ շատ կան մեր յետ ընկած գիւղերում, մանաւանդ Տաճկական Հայաստանում: Բայց քաղաքային կեանքի ազդեցութեան տակ հետզհետէ անյետանում են գիւղական ընտանիքի նախնական աւանդութիւնները: Արդէն այն գիւղերում, որոնք մօտ են, կամ տնտեսապէս կախուած են քաղաքից, նկատուում է նահապետական ընտանիքի քայքայումը, իսկ ինքը քաղաքային ընտանիքը, այդ ուղղութեամբ բաւական հեռու է գնացել: Այստեղ մենք նախ նկատում ենք, որ եղբայրների կանայք (հարսները) շատ էլ տրամագիր չեն միասին ապրելու: Վիճաբանութիւններն ու վիրաւորանքը սկսում են ամենօրեայ երևոյթներ դառնալ: Բայց որովհետև եղբայրները տնտեսապէս իրար հետ կապուած են և իւրաքանչիւրը չէ կարող առանց այլևայլի անկախ տնտեսութիւն ունենալ, ուստի սրանք գտնում են միջին ճանապարհը, որը մեր փոքր կամ գաւառական քաղաքներում սովորական երևոյթ է: Այսինքն, նրանք բաժանում են իրանց տնային կեանքը, ամէն մէկը ունենում է իւր առանձին կրակ-ճրագը, տան սարք ու կարգը, բայց զուրսը, շուկայում միասին են աշխատանք անում: Փոքրիկ քաղաքներում, մանաւանդ 20—30 տարի առաջ, կարելի էր նկատել այնպիսի բակեր, որոնք պատուհաններից զուրկ և միայն

մի ընդհանուր դուռ ունէին, որից ներս մտնելով գտնում էիք մի շարք բնակարաններ, որոնց իւրաքանչիւրը մի եղբօրն էր պատկանում: Այդպիսի բակը ուրիշ բան չէ, բայց եթէ ոչ գիւղական նահապետական տունը, որը ընդարձակուել է տնտեսական և քաղաքակրթական նոր պայմանների ազդեցութեան տակ: Սա ներկայացնում է հայկական տան և ընտանիքի էվօլյուցիայի (զարգացողական) երկրորդ աստիճանը:

Բայց ընտանիքի ձևակերպութիւնը շարունակուում է և վերջ ի վերջոյ հասցնում է այնտեղ, որ եղբայրները իրանց տնտեսութիւնն էլ (գումարն էլ) միմեանցից բաժանում են և իւրաքանչիւրը դառնում է քաղաքացիական անկախ ընտանիք: Այդպիսով, ստանում ենք մենք այն ընտանիքը, որը բաղկացած է հօրից, մօրից և սրանց տակաւին անչափահաս, կամ գոնեա չամուսնացած զաւակներից: Ամուսնացող եղբայրները չեն կարողանում միասին ապրել, իսկ նրանց ծնողները ապրում են որդիներից մէկի, մեծ մասամբ ամենակրտսերի մօտ. ինչ էլ լինի, ծերունին և պառաւը չեն ունենում այլևս այն յարգանքն և ազդեցութիւնը, որ նրանք ունէին գիւղական բարդ գերդաստանի մէջ:

Այսպէս կերպարանափոխուած քաղաքացի ընտանիքին պակասում են այն պայմանները, որոնք դրդում են գիւղական ընտանիքին, որ ինքը պատրաստ է իրան հարկաւոր պիտոյքը: Սրան աւելանում է և այն, որ քաղաքացի ընտանիքը աւելի ժամանակ է գործ դնում սչ-արհեստական զբաղմունքի վրայ, որ նա աւելի նուրբ իրեր է պահանջում: Այդ պատճառով ձգտում է նա՝ տնային սովորական գործերից (մաքրելուց, լուանալուց և այլն) աւելի մնացած ժամանակը՝ գործ դնել աւելի նուրբ առարկաներ պատրաստելու, թէև գլխաւորապէս սեփական գործադրութեան համար:

Այդ գործողութեան մէջ կարելի է երկու դիպուած որոշել:

1. Ընտանիքի անգամները պատրաստում են սեփական գործածութեան համար բոլոր սովորական կերակուրները,

կաթնեղէն (իւղ, մածուկ), եթէ ընտանիքը գոնեա մի կով ունի, ինչ որ յաճախ է պատահում գաւառական քաղաքներում: Բացի այդ, ընտանիքը պատրաստում է սովորական հագուստը կանանց և երեխաների համար, ներքին հագուստը տղամարդկանց համար, սպիտակեղէնը, անկողինը և այլն: Սրանց համար հարկաւոր նիւթերը գնւում են փոքրով՝ պատրաստ կամ կիսապատրաստ: Յետոյ ընտանիքը գործում է գուլպաներ և երբեմն ձեռնոցներ և այլն. բուրդը գնւում է, տանը նախապատրաստւում և կամ ընտանիքի կինարմատներից մէկի, կամ մի օտար կնոջ ձեռքով թել մանւում: Աղքատ ընտանիքը հացն էլ ինքն է թխում, որպէս գիւղում, իսկ փոքր ի շատէ ապահով ընտանիքը հացթուխ է հրաւիրում, որի մասին լետոյ:

2. Ընտանիքը արհեստագործում է սեփական գործածութեան համար ուրիշների անվարձ օգնութեամբ: Բոլոր կարևոր զէպքերին՝ հարսանիքին, մեռելահացին և այլն, ընտանիքը գործի է հրաւիրում մօտ ազգականուհիներին և հարևանուհիներին: Սրանք օգնում են ընտանիքին հացը թխելու, քաղցրեղէններ շինելու ու աչքի ընկնող հագուստեղէն և անկողին պատրաստելու մէջ: Եթէ հագուստը կարւում է թանգազին կտորից, օրինակ մետաքսից կամ մախմուրից, և ընտանիքում չկայ դրա համար փորձառու կին, այն ժամանակ օգնութեան է հասնում փորձառու մօտաւորներից մէկը: Ի հարկէ բոլոր այդ զէպքերում, մասնակցող կանայք հիւրասիրւում են յաճախ իրանց երեխաների հետ. բայց ոչ ոքի մտքովը չէ անցնում այդ հիւրասիրութիւնը վարձ համարել, կամ որևէ վարձ պահանջել:

Քաղաքացի ընտանիքը շատ տրամադիր չէ ուրիշներին համար գործելու՝ փող աշխատելու մտօք: Նա աւելի կամենում է իր աշխատութեամբ պատրաստուած պիտոյքը ինքը գործադրել, կամ ինչպէս ասում են՝ «մի ամբողջ տուն ստեղծել»: Երբ մի հայ օրիորդին գովել են ցանկանում, ասում են, թէ նա ընդունակ է «ամբողջ տուն գոյացնելու»: Առհասարակ ամօթ է համարւում ընտանիքին պատկանող որևէ

է առարկայ ծախել. դա տեղի է ունենում միայն ծայրահեղ զէպքերում, այն էլ ծածուկ կամ միջնորդների ձեռքով:

Միւս կողմից, որովհետև ընտանիքում պատրաստած բարիքները մեծ մասամբ չեն կարող եւրոպականների հետ մրցել, ուստի և ընտանիքի արհեստագործութիւնը չէ կարելի իսկական մտքով «տնային արդիւնագործութիւն» համարել, որպիսին օրինակ տեղի ունի Ռուսաստանի գիւղերում: Սակայն տեղ-տեղ օրինակներ կան, որոնք ցոյց են տալիս, թէ հայ ընտանիքը որոշ պայմաններում կարող էր մրցել օտար արդիւնագործութեան հետ:

Վերցնենք օրինակ «թուռի» արհեստագործութիւնը Շամախում:

Թուռը մետաքսաթելից գործած կանացի գլխաշոր է, որը մի մետր կամ աւելի երկարութիւն է ունենում և փոքր ինչ պակաս կամ նոյնքան լայնութիւն: Գինը 5-ից մինչև 15 բուբլի և աւելի, նայելով կշիռին, նրբութեանը և սպիտակութեանը (եթէ ներկուած չէ): Օրիորդները և ջահիլ հարսները թուռը սպիտակ են ծածկում կամ կարմիր, իսկ այրի կանայք կամ պառաւները կանաչ կամ կապոյտ:

Թուռը գործում են Շամախու բոլոր հայ ընտանիքներում, բայց ոչ մի մահմեդական կին չէ հասկանում այդ արհեստը:

Թուռը գործում են միլով և կեռասեղով: Յարմարութեան համար գործ են ածում այսպէս անուանուած «զէզգաճը»-ը, որ ներկայացնում է մի եռանկիւնի պրիզմա, կաւից, երբեմն էլ քարից շինած: Պրիզման ընկած է մի երեսի վրայ, որի հակառակ կողի ծայրերում թաղած են երկու կտոր եղեգն կէս-կէս արշին երկայնութեամբ: Եղեգները ուղղահայեաց են տնկած լինում: Նրանց մէջ կապած է մի թել, որից կապում են թուռի ծայրը և որքան գործում են, փաթաթում են եղեգներին: Իւրաքանչիւր տան մէջ կարելի է գտնել մէկ կամ մի քանի այդպիսի զէզգաճներ: Թուռը գործող կինարմատը ծալապատիկ նստում է զօշակի վրայ և գնում է զէզգաճը իւր հանդէպ:

Ինքը - գործը՝ համարուած է աչքերին վնասակար և սիրտ մաշող, ուստի հարուստ կանայք հազիւ են նրանով զբաղուած. իսկ չքաւոր ընտանիքներում յաճախ են թող գործում: Անընդհատ աշխատելով, մի կին կարող է վերջացնել ամսական մէկ թուռ, բայց շատ անգամ գործը ամիսներ է տևում, որովհետև միայն ազատ ժամանակն են նուիրում նրան: Երբ թողը արդէն ամբողջութեամբ գործուած է, եփում են նրան սապոնաջրում: Որքան սպիտակ և փայլուն (արծաթափայլ) դուրս գալ թուռը եփելուց յետոյ, նոյնքան աւելի արժէք է ունենում. որքան դեղնագոյն է լինում, այնքան պակաս է գնահատուած:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒՄ.

ՎԱՐՊԵՏԻ ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.

Շատ բնական է, որ գիւղացին այնպիսի բարիքներ է պատրաստում, որոնք իւր ընտանիքին հարկաւոր են: Բայց կան հազարաւոր անհատներ, որ նոյն կամ աւելի եռանդով և ոյժ գործ դնելով, այնպիսի բարիքներ են պատրաստում, որոնց իրանք ոչ մի դէպքում չեն գործադրելու: Այստեղ, ի հարկէ, նրանք ի նկատի ունին նախ և առաջ ոչ թէ պատրաստուող առարկան, այլ այն վարձատրութիւնը, որ իրանց աշխատանքի (փութաշանութեան, չարչարանքի, փորձառութեան...) համար պիտի ստանան: Այդպիսի անհատներից է կազմուած արհեստաւորների դասակարգը, որ բաւական բազմաթիւ է հայոց աշխարհում (հայաբնակ գիւղերում): Ամենուրեք գտնում ենք նրանց եռանդով աշխատելիս, մերթ իրանց խրճիթում (ուրիշների համար), մերթ գիւղից գիւղ թափառելիս, մերթ պարբերական շուկաներում, մերթ քաղաքի մշտակայ արհեստանոցներում:

Եւ ահա հարց է ծագում, թէ ինչ պատկեր է ներկայացնում այդ դասակարգը, որտեղից է նա ծագում, ինչ ձե-

ւակերպութիւններ ունի և ինչ պատճառներից... մի խօսքով, թէ ինչք մէջն է կայանում նրա ամբողջ էութիւնը: Այդ հարցը բաւարար կերպով վճռելու համար, հարկաւոր կը լինէր ժողովրդական-հոգեբանական և քաղաքակրթա-պատմական մանրամասն հետազոտութիւններ անել: Մենք կը բաւականանանք տնտեսական կեանքի յիշեալ շրջանի էութեան զլխաւոր կէտերը նկարագրելով, որի համար կը բերենք ամենագլխաւոր երևոյթները և կը բացատրենք օրինակներով:

Նախ մի կարճ նկատողութիւն կանենք վարպետի ծագման մասին ընդհանրապէս:

Երբ երկրի գումարը մեծանում է, հարստութիւնը աճում է, պահանջը շատանում է և ճաշակը նրբանում, այլ ևս անհնար և տնձեռնտու է դառնում առանձին ընտանիքի համար՝ իրեն հարկաւոր բոլոր բարիքները սեփական ոյժերով պատրաստելու: Նա պարտաւոր է այժմ առարկաներից միքանիսը գնել, միւսները պատուէր տալ: Կա տեղի է ունենում արդէն փոքր ի շատէ առաջադիմած գիւղերում, ևս առաւել քաղաքներում: Միւս կողմից գոյութիւն ունին շատ անձնաւորութիւններ, որոնք կամ բոլորովին զուրկ են մի կտոր հողից, կամ բաւական քանակութեամբ հող չունին՝ միայն երկրագործութեամբ պարապելու համար, ուստի որևէ ուրիշ զբաղմունքով պիտի իրանց զուրկ պահեն: Եւ ահա յիշեալ երկու իրար լրացնող երևոյթների ազդեցութիւնից առաջ են գալիս մասնաւոր վարպետներ՝ զանազան տեսակի:

Տղամարդը սկսում է հրաժարուել անմիջական անկախ աշխատանքից և իւր ոյժերը և ժամանակը գործադրում է ուրիշների համար, վարձատրութիւն ստանալու նպատակով: Այդպիսով առաջ են գալիս զանազան տեսակի արհեստաւորներ:

Որքան էլ բազմաթիւ լինեն արհեստաւորների տեսակները, այնուամենայնիւ նրանք բաժանուած են երկու մեծ խմբերի:

Մի կողմում կանգնած են այն արհեստավորները, որոնք սպառողի համար միայն լրացուցիչ աշխատանք են գործ դնում. նրանք գործում են նախ և առաջ սպառողի տուած պատուէրի համեմատ: Նրանք ուրեմն կատարելապէս անկախ արհեստավորներ չեն, այլ ստանում են վարձատրութիւն՝ բացառապէս իրանց գործադրած աշխատանքի համար:

Իսկ միւս մեծ խումբը կազմում են այն վարպետները, որոնք բացի գործիքներից ունին և հում նիւթեր, ուստի և կարիք չունին անպատճառ սպառողի (մուշտարու) պատուէրին սպասել, այլ կարողանում են առարկաներն իրենց ցանկացած քանակութեամբ և որակութեամբ պատրաստել, որը յետոյ ծախում են սպառողներին: Ուրեմն սրանք մի կողմից վաճառականներ են, թէև ծախելի ապրանքը ուրիշներից չեն գնել, այլ իրանք են պատրաստել: Նրանք պահանջում են սպառողից ոչ թէ լոկ իրանց աշխատանքի վարձը, այլ ապրանքի գինը, որ կարող է բարձր կամ ցածր լինել, ի միջի այլոց, նայելով թէ սույն բոպէին հում նիւթի գինը քանի է: Ուրեմն նրանք կարող են կողմնակի աշխատանք կամ վնաս ստանալ, մինչդեռ առաջին խումբը այդ հանգամանքից ազատ է:

Առաջին խումբին պատկանողներին կանուանենք վարձկան-արհեստավորներ, իսկ երկրորդին՝ վաճառող արհեստավորներ և իւրաքանչիւրի մասին կը խօսենք առանձին:

I.

ՎԱՐՁԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՒՈՐ

Որպէս արդէն ասացինք, վարձկան արհեստավորը վարձ է ստանում միայն իր գործ դրած աշխատանքի համար. այնուամենայնիւ նա հասարակ մշակ չէ, որը գործադրում է իւր Ֆիզիկական ոյժը ամեն պատահած գործի մէջ. այլ նա որոշ կոչում ունի, որովհետև իր ոյժը գործ է դնում միայն որոշ աշխատութեան մէջ: Բացի այդ, նա ունի մաս-

նաւոր ունակութիւններ և փորձառութիւններ իւր արհեստին վերաբերեալ:

Նա առաջ է գալիս այնտեղ, ուր ընտանիքը դեռ ո՛չ ամբողջովին ձեռք է քաշել այս ու այն բարիքը արդիւնագործելուց, կամ թէ ուր պահանջը այնքան մեծ չէ, կամ որոշ չէ, որ կարողանայ բաւականացնել *աւարանք* պատրաստող արհեստավորին (երկրորդ խմբին): Այդ պատճառով վարձկան արհեստավորները աւելի տարածուած են գիւղական կեանքում: Արհեստի այդ ձևը միջին տեղն է բռնում տնային աշխատանքի (տնայնագործութիւն չենք ասում) և իսկական արհեստավորութեան մէջ: Նախնական գիւղը բոլորովին կարիք չունի արհեստավոր վարձելու, որպէս տեսանք առաջին գլուխի մէջ: Իսկ քաղաքը արդէն կանոնաւոր արհեստանոցներ ունի. աւելի զարգացած գիւղերը և գիւղաքաղաքները, որտեղ ընտանիքը դեռ արհեստագործութիւնից ձեռք չէ վերցնում, իսկական ասպարէզներ են վարձկան արհեստավորների համար: Ի հարկէ ամեն տեղ բացառութիւններ կան. մի քանի արհեստներ հէնց մեծ քաղաքներումն էլ մնում են վարձկան արհեստավորի ձեռքին: Այստեղ ներգործում են զանազան տեխնիկական և տնտեսական պատճառներ, որոնց հետ կը ծանօթանանք, երբ այդ օրինակների մասին խօսելիս լինինք:

Վարձկան արհեստավորների մէջ կարելի է նկատել զարգացման երկու որոշ աստիճաններ: Նրանցից ոմանք կամ ոչ մի գործիք չունին, կամ ունին շատ հասարակ, նախնական գործիքներ, որոնցով նրանք աշխատում են գործ առաջարկող ընտանիքում: Երկրորդները ունին զժուարաշարժ կամ հաստատուն գործիքներ, կամ անշարժ գործատեղեր, ուր նրանք ստանում են պատուէր տուողից հում նիւթը և մշակում իրանց արհեստանոցում: Առաջինները ուրեմն շարժական են, իսկ երկրորդները անշարժ: Կը ծանօթանանք իւրաքանչիւր խումբի հետ առանձնակի:

Ա. ՇՕՐԺԱԿԱՆ ՎԱՐՁԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԻՈՐՆԵՐ:

Շարժական արհեստաւորը շրջում է ընտանիքից ընտանիք և իւրաքանչիւրի համար կարճ ժամանակամիջոցում կատարում է պահանջուած գործը: Ընտանիքը տալիս է նրան հում նիւթեր և հարկաւոր միջոցները (օրինակ փայտը, ածուխը) և ընտանիքի աչքի առաջ կատարում է նա իր գործը: Եւ որովհետեւ այդ ձևը գլխաւորապէս գիւղերումն է տարածուած, ուր ապրուստի անհրաժեշտ պիտուիքները (հացը, պանիրը, գինին...) առատ են, ուստի սովորաբար մի ընտանիքի մէջ գործ կատարող արհեստաւորը ստանում է իր ուտելիքը և խմելիքը: Գործը վերջացնելով, ստանում է իր վարձը, որ շատ անգամ բաղկացած է զանազան նիւթերից (ուրեմն ո՛չ փող) և հեռանում է՝ մի ուրիշ ընտանիքում գործ գտնելու: Կը բերենք մի քանի օրինակներ:

1. Թաղիք շինողը թափառում է գիւղից գիւղ իր մի քանի օգնականներով. կամ թէ մի քանի վարպետներ ընկերանում են, որովհետեւ թաղիք շինելու գործի համար անհրաժեշտ են գոնեա մի քանի ֆիզիկական ոյժեր: Նրանք մնում են գիւղական ընտանիքում մի քանի օր, ուտում են ընտանիքից և գիշերն էլ անցկացնում այնտեղ, ուր թաղիքը պատրաստում են: Վարձը ստանում են միանգամից ամբողջ աշխատանքի համար: Քաղաքներում այդպիսի արհեստաւորներ սակաւ են պատահում, որովհետեւ քաղաքացու կեանքի մէջ կապերտը և գորգը վերջ են դրել թաղիքի գործածութեանը:

2. Կօշկակարը, փափախ կարողը, դերձակը նոյնպէս գնում են տներում գործելու, բայց սրանք քիչ գործ են ունենում, ուստի երբեմն են արհեստով զբաղում: Նրանք շատ անգամ ստանում են արդէն նախապատրաստած (մշակած) նիւթը (կաշին, մորթին, կտորը) գիւղական ընտանիքից և տեղն ու տեղը առարկան պատրաստում. վարձ են ստանում առարկայի թուի և յատկութեան համեմատ: Այդ վարպետներին զբաղմունք են տալիս այն դէպքերում, երբ գործը շտապողական է (օրինակ հարսանիքից առաջ) կամ

եթէ առարկան աւելի նուրբ է հարկաւոր, քան ընտանիքի անդամները իրանք պատրաստել կարող են: Այդ վարպետները մեծ մասամբ աղքատ գիւղացիներ են և ունին մասամբ երկրագործական զբաղմունքներ: Արհեստը նրանց համար երկրորդ տեղն է բռնում: Եւ որովհետեւ նրանք մի գիւղում չնչին գործ են գտնում (պարապ ժամանակ, ուստի գնում են գիւղից գիւղ, թողնելով իրանց ընտանիքը մայրական գիւղում:

3. Աւելի անուանի արհեստաւորներ են գիւղական արծաթագործները: Գիւղական ազգաբնակութիւնը աչքի ընկնող հակումն ունի դէպի արծաթեայ զարդարանքը: Փոքր ի շատէ ապահովուած գիւղական ընտանիքի կինարմատները զարդարում են իրանց հագուստը արծաթեայ կոճակներով և կարթիկներով (ղփչաներով) և ճակատները՝ արծաթեայ շրջթաներով: Նոյն սովորութիւնը տարածուած է և մահմեդական ազգաբնակութեան մէջ: Այստեղից ծագում է մի լաւ ասպարէզ արծաթագործների համար: Արծաթագործը տարածում է իւր գործիքները պատուէր տուող ընտանիքի խորճիթի մի անկիւնում և ստանում է արծաթը, որ մեծ մասամբ բաղկացած է լինում հին փողերից կամ արծաթեայ փչացած առարկաներից: Այդ արծաթագործներից ոմանք քաղաքացիներ են լինում, որոնց մասին լետոյ կը խօսենք:

4. Ներկարարը: Մինչև իսկ առաջ զնացած գիւղերում ընտանիքը ձեռք չէ վերցնում բրդեղէն, բամբակեղէն և սրանց նման առարկաներ արտադրելուց: Միայն թէ լիշեալ գիւղերում աշխատութեան մի մասը յանձնում է վարպետներին, օրինակ ներկելը: Ներկարարը գալիս է ընտանիքի մօտ, բերելով քաղաքում գնած կամ սեփական պատրաստած ներկը: Նա գործում է պատուէր տուողի բակում կամ խրճիթում և պայմանաւորուած վարձը ստանում:

5. Վերջապէս կը լիշենք այստեղ քարտաշին, որմնադրին և հիւսնին: Սրանք գործում են ինչպէս քաղաքում, նոյնպէս և առաջ զնացած գիւղերում, ուր գիւղացին աւելի լաւ բնակարան է ուզում, որը ինքը չէ կարող կառուցա-

ներ: Ամենուրեք այդ արհեստավորները մնում են վարձկաններ, որովհետև գործը ինքը այդ է պահանջում:

Բոլորովին այլ տեսակի վարձկան արհեստավորներ են մի շարք քաղաքացի կանայք (քաղաքներում), որոնք շատ անգամ իրենց որբերի միակ խնամողներն են: Նրանք իրանց ձեռքերի աշխատանքով կերակրում են հարազատ երեխաներին: Սրանց են վերաբերում —

1. Կար անող կինը: Ինչպես արդէն ասուած է, քաղաքացի ընտանիքը ինքն է պատրաստում սովորական հագուստը և սպիտակեղէնը: Ուրիշ կերպ է բանը, երբ հագուստը պիտի կարուի թանգագին կտորներից, օրինակ հարսնացուի համար: Այդ դէպքում յաճախ հրաւիրում է կար անող կինը, որը ընտանիքի աչքի առաջ կտորը ձևում է, վերցնում է միւս հարկաւոր նիւթերի (թելերի, ժապաւէնների...) հետ միասին և իր սեփական բնակարանում կարը անում: Այնպէս որ վերջին կէտում սա նման է անշարժ վարձկան արհեստավորին:

2. Մուշտակակար կինը կարում է կանանց համար մուշտակներ թաւիշից և թանգագին մորթիներից: Նրա յարաբերութիւնը ընտանիքի հետ նախընթաց վարպետուհու պէս է: Միայն թէ մուշտակ կարողի գործը աւելի դժուար է և աւելի փորձառութիւն է պահանջում, ուստի իւրաքանչիւր կար անող կին չէ կարող մուշտակներ կարել: Մուշտակակար կինը տղամարդկանց մուշտակներ չէ կարում:

3. Թոնիր շինող կինը: Երբ քաղաքացի ընտանիքը կամենում է փոքր ի շատէ մեծ թոնիր ունենալ, այն ժամանակ շինել է տալիս նրան իր բակում: Թոնիր շինող կինը շաբաթների ընթացքում ամենայն օր գալիս է և մի քանի մատ աւելացնում, բարձրացնում թոնիրի պատերը: Երբ ամբողջ թոնիրը շինուած է լինում, ապա յիշեալ կինը սկսում է նրան «այրեր»: Թոնիրի մէջը ածում են չոր փթիւր (թաղաք) և վառում: Ապա այնպէս ծածկում են թոնիրի բերանը, որ օդը ազատ խաղալ չկարողանայ և թոնիրը ծխով լիքը լինի: Մի քանի օրից յետոյ թոնիրը բացում են և նա պատրաստ է:

Թոնիր շինողը վարձատրուած է միանգամից «ամբողջ գործի համար». բացի այդ, սովորաբար իւրաքանչիւր գալուձ, թէյ է խմում, կամ նախաճաշիկ է անում: Վերջին սովորութիւնը գիւղական արհեստավորի կեանքի մնացորդն է:

4. Հացթուխ կինը: Քիչ ապահովուած քաղաքացի ընտանիքը, հաց թխելու համար, ինքը խմորը հունցում է, գունդեր կազմում և թոնիրը վառում. ապա հացթուխը գալիս է և հաց թխում: Աւելի ապահովուած կամ հարուստ ընտանիքները ամբողջ գործը թողնում են հացթուխի վրայ, այսինքն հունցելն էլ, գնդեր կազմելն էլ վերջինս է կատարում: Ընտանիքի անդամները կամ ծառայողները միայն կողմնակի կերպով օգնում են հացթուխին (գունդերը տանում են թոնրատուն, հացը բերում են տուն և այլն): Հացթուխը վարձատրուած է փոքր ինչ էլ փողով (օրինակ 10 կ.) և մի հաց է ստանում (նոյնպէս ճաշում է շատ անգամ):

Իւրաքանչիւր հացթուխ կին ունի մի շարք միւշտարիւր ընտանիքներ. այնպէս որ նա ամենայն օր որևէ տեղ հաց է թխում: Հաց ունենալ կամեցող ընտանիքը նախընթաց օրը տեղեկացնում է հացթուխին: Եթէ հացթուխը չէ կարող գալ, յետաձգում են մէկ երկու օրով, եթէ շատ վուազ պահանջ չկայ: Այդպիսի օրերում ընտանիքները միմեանցից հաց են պարտք առնում:

Այժմ մենք, առաջ քան երկրորդ աստիճանին անցնելը, քանի մի օրինակներ կը բերենք, որոնք մի կողմից նման են առաջին աստիճանին, միւս կողմից երկրորդ. ուրեմն կագում են անցողական դրութիւն:

Քաղաքացի արծաթագործները թափառում են յաճախ գիւղից գիւղ: Իւրաքանչիւր գիւղում իջևանում են նրանք (կամ թէ տեղ են վարձում): Այսօրևէ ծանօթի խրճիթում (կամ թէ տեղ են վարձում): Այստեղ աշխատում են նրանք մի քանի շաբաթ, պահանջին նախընթաց գնում են գործիքներով հանդերձ մի ուրիշ յելով, և յետոյ գնում են գործիքներով հանդերձ մի ուրիշ գիւղ, ուր նորից սարքում են իրանց արհեստանոցը: Ուրեմն նրանք սեփական արհեստանոց ունենալով, նմանում են վարձկան արհեստավորների երկրորդ խմբին, միայն թէ առաջին

խմբի ներկայացուցիչների նման թափառում են, թէև ոչ տնից տուն, այլ գիւղից գիւղ:

Նոյնանման աստիճանի վրայ են կանգնած ոմանք բրուտներից: Յաճախ պատահում է, որ գիւղացիները գինու մեծ կարասների կարիք են զգում: Այդ կարասները չի շինում բրուտը՝ առանց նախապէս պատուէր ստանալու: Բացի այդ՝ կարասները ծանր և դժուար փոխադրուող են: Ուստի երբ մի գիւղ իր սահմաններում լաւ կաւ և բաւականաչափ վառելիք (փայտ) ունի, հրաւիրում է *) մի բրուտ իր գործիքներով և պատրաստել է տալիս հարկաւոր կարասները. քուրան պատրաստելը և փայտ ու կաւ հասցնելը գիւղացիների գործն է: Գործը վերջացնելուց լետուց, բրուտը հեռանում է գիւղից: Ուրեմն նա էլ թափառելու բնաւորութիւն ունի, միայն թէ գիւղից գիւղ:

Նոյն տեսակին կարող ենք վերաբերել և թափառիկ տաշտաշէնին, որը յայտնուում է գիւղերի հրապարակներում կամ փողոցներում իւր հասարակ գործիքներով: Նա ունի իւր հետ կոճղներով լիքը մի սայլ: Գիւղացիները դուրս են գալիս նրա մօտ և կոճղեր ընտրելով, տեղն ու տեղը շինել են տալիս գտնազան տաշտեր և նման առարկաներ: Պատուիրողը ինքն է ընտրում փայտը (կոճղը) և նախապէս պայմանաւորուում է վարձատրութեան մասին:

Բ. ԱՆՇՍՐԺ Վ.ԱՐՁԿՍ.Ն ԱՐՀԵՍՏԱԻՈՐՆԵՐ

Անշարժ արհեստանոցը առաջ է գալիս, երբ արհեստաւորին հարկաւոր են դժուար տեղափոխուող գործիքներ կամ հիմնարկութիւններ, կամ եթէ արհեստը կապուած է բնական անշարժ պարագաների հետ: Բերենք օրինակներ:

1. Տինգ: Սա մի անհաւասար լծակ է (рычагъ) գերաններից կազմած, որ գործ են դնում օրինակ, բրինձ մաք-

*) Համեմատ. Хатисовъ. Кустарн. пром. Закавк. края. Стр. 83.

ըելու համար: Տինգը շարժուում է մարդու ոյժով: Վարպետը կանգնում է հօրիզոնական գերանի վրայ, լենման կէտի մօտ: Իւր մի ոտը դրած է լինում ուղիղ լենման տեղում, իսկ միւս ոտը փոփոխակի դնում է լծակի աջ կամ ձախ բազկի վրայ, նայելով թէ տինգի որ բազուկը պիտի իջնէ և որը բարձրանայ: Այստեղ է երևում վարպետի ընդունակութիւնը (փորձառութիւնը), ըստ որում նա զարմանալի արագութեամբ և տակտով պտուում է լենման կէտի շուրջը, որտեղից անփորձ մարդը իսկոյն վայր կը գլորուէր: Երկար բազուկի տակում գտնուում է մի քարած տափիկ կամ մի աւագան, ուր կիտում են բրինձի հասկերը: Նոյն բազուկը ունի իւր ծայրում մի ուղղահայեաց փայտ, որը հարուածներ է տալիս բրինձի հասկերին:

Ո՛չ ամեն մէկ գիւղացի տինգ ունի, որովհետև գործը բաւական դժուար, գուցէ և վտանգաւոր է: Տինգատէրը մաքրում է սրա-նրա բրինձը և որպէս վարձատրութիւն՝ ստանում է մաքրած նիւթի մի որոշ մասը: Այդ գործիքը ամեն տեղ կայ, ուր բրինձ են ցանում: Ներկայումս ռուս աղանդաւորները մտցրել են մեր երկրում չրատինգեր, բայց մեր նկարագրած ձևը տակաւին շարունակում է իւր գոյութիւնը:

2. Ջրաղացի (ալիւրի) նպատակն է ցանկացողների համար ցորենը աղալ. ջրաղացը ստանում է որպէս վարձ ցորենի որոշ մասը: Ջրաղացի յարաբերութիւնը գէպի իւր յաճախորդներն երկու տեսակ է: Աւելի նախնականը այն է, որ գիւղացին բերում է իւր ցորենը ջրաղաց, ուր նա ինքը իւր ընտանիքի օգնութեամբ աղալու գործը կատարում է: Երկրորդ տեսակ յարաբերութիւնը այն է, որ ջրաղացում գործը կատարողը ջրաղացպանն է: Երբեմն միևնոյն ջրաղացում երկու տեսակ յարաբերութիւններն էլ տեղի են ունենում, բայց առհասարակ երկրորդ տեսակը աւելի քաղաքներում և մեծ գիւղերումն են սովորական, իսկ առաջին տեսակը ետ ընկած գիւղերում: Ի հարկէ ջրաղացը, նայելով թէ գործ կատարողը ով է, աւելի կամ պակաս է վարձ վերցնում:

3. Իւղաճանքը *) մի բաւական բարդ հիմնարկութիւն է: Բոլոր գործիքները և կարասիքը նախնական—ասիական են: Իւղաճանքի տէրը սովորաբար մէկ հարուստ գիւղացի է լինում: Իւղաճանքը գործում է միայն միւշտարիների համար. այսինքն նա ուրիշների բերած կտաւատից իւղ է հանում, ստանալով որոշ վարձատրութիւն:

Գիւղացին բերում է մէկ չոխ (12—13¹/₂ փուլթ) կտաւատ: Սրան փոքր առ փոքր աղանձում են վառարանում, որ կամարաձև կրակարան է, որի վերևը գտնւում է կտակարան, իսկ ներքևում հնոցը: Մէկ մշակ շարունակ խառնում է կտաւատը, աղանձելու ժամանակ: Աղանձածից մաս առ մաս վերցնելով աղում են պտտուող քարի տակ: Այդ քարը ուղղահայեաց պտտւում է (вертикально) իւղաճանքի գետնի վրայ և շարժւում է շրջան կազմող գոմէշի ոյժով: Այդպէս ստացուած նիւթը խախալում են կախուած, տարուբերուող խախալով: Ինչ որ էլի մնում է խախալում, նորից ածում են քարի տակ: Խախալած մասը հաւաքում են մէկ տաշտի մէջ, ուր նրան մէկ մշակ ջուր է սրսկում և խառնում: Այդ անգամ ստացուածը նորից վերադարձնւում է քարի տակը, որից դուրս գալով նա կոչւում է գիլաս: Գիլասը ածում են զամբիւղների մէջ: Մինչդեռ երկու մշակներ գիլասը զամբիւղ են ածում, երրորդը նրան յարգ է խառնում և ոտներով ամրացնում: Այդպիսով լքցրած զամբիւղները դրւում են լծակի (рычагъ) տակ, ուր նրանից իւղը հանւում է լծակի հարուածների ազդեցութեամբ: Քսանուչորս ժամուայ մէջ է իւղը ստացւում, որը հոսում է ներքևում կանգնած ամանի մէջ:

Իւրաքանչիւր միւշտարի (հերթով) տալիս է իւղաճանք մէկ չոխ կտաւատ: Ամբողջ գործողութիւնը երեք օր է տևում, որովհետև աղանձելը տևում է 24 ժամ, աղալը, խախալելը և ջուր սրսկելը 24 ժամ և նոյնքան էլ ճնշողականութեամբ իւղը դուրս հանելը: Միայն թէ նոյն երեք

*) Տես Աբէլեանց: Իւղահանութիւնը Երևանեան նահանգում. Մշակ. 1884. սկսեալ № 28. Գլ. IV.

օրում իւղ են հանում ոչ թէ մէկ չոխ կտաւատից, այլ երեք չոխից, որովհետև աշխատանքը (գործը) բաժանուած է, այնպէս որ, երբ առաջին չոխը աղանձուած է և սկսում են նրան աղալ. առաջին բանուորները սկսում են աղանձել մի նոր միւշտարու կտաւատը:

Միւշտարին վճարում է հանքատիրոջ մէկ չոխ կտաւատից իւղ հանելու համար, 12 ֆունտ իւղ, ջուր սրսկողին 3 ֆ., միւս չորս բանուորներից իւրաքանչիւրին 1¹/₂ ֆ., գործ է ածւում լուսաւորութեան համար 1¹/₂ ֆ., վառարանում այրւում է 1¹/₂ ֆ., բոլորը միասին 24 ֆ.: Բացի այդ՝ պարտաւոր է նա երեք օրից մէկում բանուորների ուտեստը տալ: Գոմէշները (որ միքանի հատ են) կերակրում է նա նոյնպէս մէկ օր կտաւատի սերմի մնացորդներով: Եւ նա ինքն էլ երեք օր շարունակ մնում հանքատանը:

4. Սրանց կարգին են վերաբերում և գիւղական դարբնոցները: Իւրաքանչիւր մեծ գիւղում գտնւում է սովորաբար մէկ կամ միքանի դարբնոց: Փոքրիկ գիւղերը յաճախ զուրկ են դարբնոցից: Այդպիսի գիւղերը հրաւիրում են երբեմն մէկ դարբին իւր շարժական դարբնոցով, որը կազմակերպում է նա մի վարձուած տեղում: Դարբինը մընում է գիւղում որոշ ժամանակ, մինչև որ բոլոր եղած գործերը վերջացնում է: Նրա գործն է գլխաւորապէս՝ նորոգել գիւղացոց երկրագործական գործիքները:

Մշտակայ դարբնոցը սարքած է հետևեալ կերպով *): Հնոցը բաժանում է դարբնանոցը երկու մասի: Առջևի մասում գտնւում են մէկ մեծ և միքանի փոքր սալեր: Բացի այդ՝ դարբնոցում կան մէկ փուքս, քանի մի մուրճեր, ունելիքներ և այլն: Դարբնոցում սովորաբար աշխատում են՝ մէկ վարպետ, մէկ օգնական և մէկ աշակերտ: Վերջինս շարունակ շարժւում է փուքսը՝ կրակը անշէջ պահելու համար: Վարպետը դուրս է հանում վառարանից կարմրած երկաթի կտորը և զնում է սալի վրայ

*) Համեմատել Хатисовъ. Куст. Пром. Стр. 65.

և աջ ձեռքի մուրճով հարուած է տալիս երկաթին: Վարպետի հանդէպ կանգնած է օգնականը՝ ձեռքին աւելի մեծ մուրճ (երկու ձեռքով բռնած): Նա հետևում է վարպետին, տալով նոյն «բովանդակութեամբ», բայց աւելի զօրեղ հարուած, կամ թէ նոյն ոյժով մի քանի անգամ: Այդպէս հերթով շարունակում են հարուածները, քանի դեռ երկաթը չէ սառնացել: Վարպետի հարուածների նպատակն է ձևակերպել երկաթը, իսկ օգնականի հարուածները վարպետի շարունակութիւնն են կազմում: Ուստի օգնականը պիտի աչքի տակով դիտէ հարուածները, սրանց բովանդակութիւնը ըմբռնելու համար:

Ներկարաններ կան բոլոր քաղաքներում և մեծ գիւղերում: Ներկարանում, ուր գործում է վարպետը միքանի օգնականներով կամ ընկերակիցներով, գտնւում են մի շարք մեծ կարասներ, որոնք թաղուած են մինչև բերանը: Այդ կարասներում միշտ պատրաստ ներկ է լինում, որը ժամանակ առ ժամանակ նորոգւում է (թարմացնւում է): Ներկարարը ստանում է մասնաւոր միւշտարիներից կամ վաճառականներից կտաւի կամ բրդի թելեր և կտորներ՝ ներկելու համար: Նա ինքը չունի սեփական թելեր կամ կտորներ: Իւր աշխատութեան համար ներկարարը վարձ է ստանում, նայելով թելի կշռին, իսկ կտորի՝ լայնութեան և երկարութեան:

Սոյն կարգին է պատկանում և ոսկերիչը (որ հասարակ արծաթագործներից զանազանւում է և հաստաառուած է քաղաքում): Նա ի հարկէ կատարում է նոյնպէս արծաթի գործ, բայց այս դէպքում էլ նա ըստ կարելոյն մաքուր արծաթ է գործածում և աւելի նուրբ պատուէրներ է կատարում: Եւ որովհետև արծաթն ու ոսկին թանգ նիւթեր են, արհեստաւորը միջոց չունի ապրանքի մեծ պաշար ունենալ: Ուստի նա բաւականանում է պատուէրներ վերցնելով, որի համեմատ և վարձ է ստանում: Ոսկերիչը շինում է մատանիներ, զօտիներ, կոճակներ, ճակատանոցներ և այլն:

II.

ԳՈՒՄԱՐԱՏԵՐ ԱՐՀԵՍԱԻՈՐԸ

Որքան աւելի աճում է քաղաքի ազգաբնակչութիւնը, նոյնքան աւելի հաւանական է դառնում արդիւնագործողի համար, որ նրա նախապէս պատրաստած ապրանքները համապատասխան գնողներ կունենան: Միւս կողմից արդիւնագործողը աւելորդ օգուտ է ունենում, եթէ ինքն է ձեռք բերում հում նիւթերը մեծ քանակութեամբ աւելի էժան գնով: Բացի այդ՝ քաղաքացի միւշտարին հազիւ է ունենում հում նիւթեր (քանի որ գիւղական տնտեսութեամբ չէ զբաղւում), ուրեմն նա էլ պիտի ձեռք բերէր ուրիշից: Այդպիսով, հնարաւոր և յարմարաւոր է դառնում, որ արհեստաւորը մշտակայ արհեստանոց է հիմնում շուկայում, կամ հում նիւթի կենդրոնին մօտ տեղում փոքրիկ գումարով ձեռք է բերում անհրաժեշտ նիւթերն և ապրանք պատրաստում: Ուրեմն նա դառնում է բաւական անկախ մի արդիւնագործող: Բայց թէ որքան առաջադիւմում է նա սոյն ուղղութեամբ, այդ կախուած է կողմնակի հանգամանքներից, օրինակ՝ պահանջի մեծութիւնից, հում նիւթի տեղափոխականութիւնից (հեշտ թէ դժուար է նրան տեղափոխելը), պատրաստած ապրանքի տեղականութիւնից և այլն: Ուստի յիշեալ կարգին վերաբերող արհեստները, կատարելապէս հաւասար զարգացողական աստիճան չեն ունենում:

Ամենացածր աստիճանի վրայ կանգնած են այն քաղաքացի կանայք, որոնք իրանց գնած նիւթերից զանազան պիտուքներ են պատրաստում և ծախում տնից տուն: Օրինակներ:

ա) Ժապաւաւէնագործ: Ասիական հագուստները, մանաւանդ կանանց, բայց տեղ-տեղ և տղամարդկանցը, զարդարւում են արծաթաթել կամ ոսկեթել ժապաւէններով և դէլթաններով: Վերջիններս լինում են նոյնպէս հասարակ թելերից, (մետաքս, բուրգ): Մասնաւոր կանայք իրանց տանը

պատրաստում են այդ ժապավենները և ղէլթանները, որև ծախում են իրանց մօտ եկող կին միւշտարիներին (ընտանիքներին): Բայց նրանք պատուէրներ էլ քիչ չեն վերցնում:

բ) Վարտիքի քողեր գործողներ: Ասիական վարտիքը կոճակներ չունի, որոնց փոխարէն վերևի մասում խողովակ ունի, որի միջով քող է անցնում: Վերջինս մի հասարակ գոտի է բրդից, բամբակից, կամ մետաքսից: Յիշեալ կանայք գործում են այդպիսի գոտիներ և ծախում իրանց մօտ եկող գնողներին կամ շրջիկ մանրավաճառների միջոցով:

գ) Կաւեղէններ շինող: Վերևում խօսել ենք թոնիր շինողի մասին: Նրանից պէտք է զանազանել կաւեղէններ շինողին: Ի հարկէ պատահում է, որ միևնոյն կինարմատը երկու գործ էլ կատարում է, բայց յաճախ ամօթ է համարում կաւեղէններ շինող կինը, գնալ ուրիշների տունը թոնիր կառուցանելու համար: Իսկ իւր բակում շինում է նահում կաւից զանազան օջաղներ, քուրաներ, մանղալներ և այլն. Նոյն կինը պատրաստում է իւր բակում նոյնպէս թոնիրներ, միայն թէ փոքրները, որովհետև մեծ թոնիրները դժուար է տեղափոխել և անձեռնտու է գնողի համար: Հէնց այդ հանգամանքն է պահպանում վարձկան թոնիր շինողի գոյութիւնը (տես վերևում):

Կանանց արհեստը սոյն աստիճանից աւելի բարձրանալ չէ կարողանում, որովհետև կինը շուկայ չէ դուրս գալիս (ամօթխածութեան հետևանք) և տնային աշխատանքից ձեռք չէ վերցնում:

Նոյն աստիճանի վրայ կանգնած է տղամարդ արհեստաւորը արդէն գիւղական կեանքում:

Որպէս լաւ օրինակ սրա համար կարող է ծառայել գիւղական խառատը (ատաղձագործ), որը «քաշում» է ամեն տեսակ կարասիք: Նա նախ և առաջ երկրագործ է և իւր արհեստը բանացնում է միայն կողմնակի կերպով: Նրա արհեստանոցը գտնւում է սովորաբար այնպիսի գետակի ափում, որի ջուրը արագահոս է, որովհետև նա օգտւում է հոսանքի ուժից: Ոյժի տեղափոխութիւնը կատարւում է նախնա-

կան-հասարակ գործիքների օգնութեամբ: Իւր պատրաստած ապրանքը ծախում է յիշեալ վարպետը կամ տեղն ու տեղը, կամ գիւղերում թափառելով, կամ թէ քաղաքի վաճառականներին (որոնցից ապա քաղաքացիք գնում են):

Սրանից հետու չէ գնացել կնճիթահանքը *): Սրա տէրը սովորաբար գիւղական փոքրիկ գումարատէր է: Կնճիթահանքը ուրիշներից պատուէր չէ վերցնում: Նրա տէրը գնում է կնճիթի սերմը և իւր է հանում ծախելու համար: Իսկ այդ գործը նրա համար նոյնպէս կողմնակի զբաղմունք է:

Գործի տեսնիկը հետևեալն է: Սերմը աճում են թաղարի մէջ, որը մի աւազան է, քարից և կիրից շինած, գոգաձև (ВОГНУТЫЙ) յատակով: Աւազանում այնքան ջուր կայ, որքան հարկաւոր է բոլոր սերմը ծածկելու համար: 24 ժամուայ մէջ սերմը կակղում է, որև է դուրս են հանում և տարածում կալի մէջ, որը չորսանկիւնանի փոս է, արհեստանոցի յատակի մէջ քանդած: Այստեղ փշրում են սերմը փայտեայ մուրճերով: Ապա ամբողջ նիւթը աճում են երկրորդ փոսի մէջ, որը լցրած է աղաջրով. այստեղ պճեղները տակն են նստում, իսկ մաքուր սերմը դուրս է գալիս ջրի երեսը: Սերմը հաւաքում են ջրի մակերևոյթից և աղանձում: Յետոյ աղանձած սերմը աղում են սովորական ջրաղացի քարի միջոցով, որը պտտւում է ձիու ուժով: Ստացւում է կիսահեղուկ նիւթ, որը աճում են մէկ չորսանկիւնանի քարեայ աւազանի մէջ: Ապա եռացող ջուր են աճում վրան, որի ազդեցութիւնից նիւթը խմոր է դառնում: Այդ խմորը կոխոտում են ոտներով վերոյիշեալ քառանկիւնի աւազանում. իսկ մէկ ուրիշ մշակ հաւաքում է դուրս եկած իւրը մեծ գդալով և աճում մի ամանի մէջ: Մնացորդն էլ ծծեցնում են բամբակով և մզում:

Սրանց թւին է պատկանում նաև բրուտը: Նա արդիւնաբերում է մանր խեցեղէններ, որոնք գիւղական ընտանի-

*) Արեւիկայից. Իւզահանութիւնը Երևանեան նահանգում. Մշակ, 1884, № 28-ից. Գլ. III.

քում անհրաժեշտ են, բայց քաղաքացին էլ քիչ չէ օգտուում սրանցից: Սովորաբար խեցեգործարանը հիմնում են այնպիսի տեղում, ուր կաւը և վառելիքը (փայտը) էժան և հեշտ կարելի է ձեռք բերել: Միքանի ընդարձակ սենեակներ անհրաժեշտ են խեցեգործարանի համար: Բրուտը աշխատում է օգնականների հետ, որոնք յաճախ իր ընտանիքի անդամներն են լինում: Գործը բազմապիսի է երկու մասից. 1) ամանների ձևակերպումը (շինելը) և 2) թրծելը: Պատրաստ ապրանքը ծախում է բրուտը հայրենի և օտար գիւղերում: Կամ թէ բերում է քաղաք, ուր վաճառում է փողոցներում կամ միանուագ տալիս մանրավաճառին:

Վերջապէս հանդիպում ենք գիւղական կեանքի մէջ, այս կամ այն գիւղում, խաղաղորդին (կաշէգործ): Նա առնում է գիւղացիներից հատ-հատ զանազան հում կաշիներ՝ տաւարի, ոչխարի, ուղտի, ձիու, այծի... Իրանք գիւղացիները բերում են պատահամբ ունեցած մորթին կամ կաշին նրա մօտ, կամ թէ նա ինքը շրջում է գիւղից գիւղ և հաւաքում:

Իւր բակումը խաղաղորդը ունի մի շատ մեծ փայտեայ տաշտ, որ սիւլայ է կոչւում: Նրա վրայ հասարակ չարդախ է կառուցած: Սիւլայի մէջ ջուր են լցնում և սրան էլ կիր աւելացնում, խառնում. այդպէս մնում է երեք օր, որից յետոյ կաշիները թրջոց են դնում, որ աւելում է տասնուերկու օր, որի ընթացքում երեք օրը մէկ անգամ դարձնում են կաշիները, որպէս զի կիրը ազդէ բոլոր կողմերից: Յետոյ կաշիները դուրս են հանում և լուանում գետում կամ տեղն ու տեղը, աւազանում: Լուացած կաշիները մնում են ջրում: Հատ-հատ միայն հանում է նրանցից վարպետը, կախում է մեխից և սկսում է քերթել, այսինքն քերել մսեղէն և նմանօրինակ մասերը: Սրա համար վարպետը գործ է ածում մի երկաթեայ սուր աղեղ, իսկ աջ ոտով ներքև է քաշում քողը. աղեղը սայթաքում է կաշիի մակերևոյթով դէպի ներքև և աւելորդ մասերը քերում:

Ապա խաղաղորդը տանում է տինգատիրոջ մօտ վէսյ-

զնայ կոչուած բոյսի տերևները և տինգի միջոցով փոշի է դարձնել տալիս: Տերևները գնել է նա գիւղացիներից, որոնք հաւաքել են անտառից: Վէսլգեայի փոշին ածում է նա արդէն լուացուած և մաքուր ջրով լցրած սիւլայի մէջ, խառնում է և դնում նրա մէջ քերթած կաշիները, ուր սրանք երեք շաբաթ մնում են: Այդ ժամանակամիջոցում չորս օրը մէկ անգամ դարձնում են կաշիները: Վերջապէս հանում են նրանց մէկիկ մէկիկ, տարածում փայտեայ շրջանակների մէջ և դնում արևի տակ: Չորանալուց յետոյ կաշին այնքան պատրաստ է, որ նրան գործ են ածում տրեխների համար: Խաղաղորդը ծախում է այս կաշիները գիւղացիներին, շաբաթական շուկաներում կամ քաղաքներում: Իսկ եթէ այդպէս ծախելը ձեռնառու չէ երևում, ապա շարունակում է վարպետը նրանց աւելի մշակել, որ է՝ ներկել սև պաղլեղով: Սրանից յետ ծախում է նա աւելի հասարակները կօշկակարին, իսկ նուրբերը սսպագէնագործին, քաղաքում: Մեր ասածները վերաբերում էին աւելի խոշոր կաշիներին:

Փոքր ինչ ուրիշ տեսակ են պատրաստում ոչխարի կամ այծի մորթիները: Այդ մորթիների վրայ սրբուկում են կրափոշի և երեք օրից յետոյ քերթում են դարթուով, ըստ որում նախապէս բուրդը կտրատում են, լուսնում կաշին և տարածում շրջանակների (դարումների) մէջ: Չորանալուց յետոյ ներկում է վարպետը նրանց՝ կարմիր, սև կամ կանաչ և տանելով քաղաք, ծախում է կօշկակարներին կամ սսպագէնագործներին:

Քաղաքների կաշէգործարանները գործողութեան եղանակներով շատ չեն տարբերում մեր նկարագրածից: Տեղանականներով շատ չեն տարբերում մեր նկարագրածից: (Եւրոպականները կան ամենագարգացած կաշէգործարանները (Եւրոպականները չհաշուած) գտնւում են Թիֆլիսում: Բոլոր խաղաղորդները *) զործում են այստեղ դաբաղխանայ կոչուած շինութեան մէջ, ուր միմեանց մօտ կանգնած են մի շարք չաներ, որոնք լցւում են հանքային բաղնիսների ջրերով: Ամբողջ շէնքը

*) Хатисовъ. Кустарн. пром. Стр. 96.

պատկանում է մէկ մասնաւոր մարդու, որը առանձին չա-
ները վարձով է տալիս: Այստեղ աշխատում են մինչև 50,
կատարելապէս տնկախ վարպետներ, որոնցից իւրաքանչիւրը
ունի մի քանի օգնականներ և աշակերտներ: Սրանք գոր-
ծում են ամբողջ տարին, բացի ձմեռուայ ցուրտ օրերից,
երբ չաների ջուրը սառչում է: Չանի վրայ տախտակ է մեկ-
նած, որի վրայ կանգնած աշխատում է վարպետը: Կաշի-
ների մշակութեան եղանակի մէջ քանի մի աննշան նորու-
թիւններ են մտցրած: Այստեղ էլ վերջ ի վերջոյ ստացւում
է տեղական կոպիտ կաշի, որը պիտանի է միայն ասիական
կոշիկակարների և ասպագէնագործների համար:

Սալազործները և փայտեայ գործիքներ շինողները հիմ-
նում են իրանց արհեստանոցները մեծ գիւղերում և քա-
ղաքներում: Սրանք երկու առանձին արհեստաւորներ են,
թէև պատահում է, մանաւանդ գիւղերում, որ նրանք ընդ-
հանուր արհեստանոցում են գործում, կամ հէնց միևնոյն
անձնաւորութիւնը բանացնում է երկու արհեստն էլ: Եր-
կու արհեստն էլ տարածուած են մեծ մասամբ անտառա-
մօտ տեղերում: Նրանց գործն է պատրաստել կամ նորոգել
երկրագործական գործիքներ և հասարակ սայլեր: Աշխա-
տում են միայն պատուէր ստանալով, և գործ են ածում
նոր պատուէրների համար սեփական նիւթերը և հատով
վարձատրութիւն են ստանում:

Բոլոր վերոյիշեալ արհեստաւորները հիմնում են իրանց
արհեստանոցները ըստ կարելոյն այն տեղերում, ուր աւելի
յարմար է ձեռք բերել հում նիւթերը և միջոցները (օրի-
նակ բաւականաչափ ջուր): Շուկան նրանց համար երկրոր-
դական տեղն է բռնում: Ուրիշ կերպ է մի շարք այնպիսի
արհեստաւորների բանը, որոնց համար շուկայում լինելը
առաջնակարգ նշանակութիւն ունի: Այս պատճառով կենդ-
րոնացնում են նրանք իրանց արհեստանոցները շուկայում,
ուր թէ գործում են և թէ տեղն ու տեղը վաճառում իրանց
ապրանքները: Անցնենք այժմ սրանց խմբին:

Դերձակ: Վարպետը նստած է արհեստանոցի առջևի

մասում փոքրիկ մինդարի վրայ. նրա առջև կանգնած է մէկ
ցածր բայց ընդարձակ թախտ, որի վրայ վարպետը ձևում
և ողորկում է: Թախտի միւս կողմերում նստտած են շար-
քով օգնականները և աշակերտները: Ինքը վարպետը ձևում
է կտորներն ու տալիս օգնականներին կարելու: Օգնական-
ները շաբաթական վարձ են ստանում իրանց փորձառու-
թեան համեմատ, իսկ աշակերտները միայն ուտելիքն են
ստանում: Արհեստանոցում կայ սովորաբար բրդեղէնի (շա-
ւերի) քիչ թէ շատ պաշար, որ առնում է դերձակը կամ վա-
ճառականներից, կամ ուղղակի արդիւնագործողներից, որոնք
մեծ մասամբ գիւղացիներ են և գործում են շալեր ազատ
ժամանակներում: Այդ կտորներից պատրաստում է դերձակը
տղամարզի վերարկուներ և վարդիկներ: Քիչ չէ պատահում,
որ միւշտարին ընտրում է կտորը դերձակի մօտ և պատուի-
րում է իւր համար կարել այս ու այն հագուստը: Այդպիսի
հագուստ հագնում են գիւղացիներն և ոչ-հարուստ քաղա-
քացիները: Իսկ աւելի հարուստները գնում են դրսից ներ-
մուծուած ապրանքի կտորը (մահուդ և այլն) և տալիս են
դերձակին, պատուիրելով իրանց ուզածը կարել:

Դերձակի հետ կապուած է *Ժապաւէնագործը* (ղազազը),
որը պատրաստում է իւր արհեստանոցում զանազան ժապա-
ւէններ և դէյթաններ, որոնք հարկաւոր են ասիական տա-
րազի համար: Ժապաւէնագործից գնում են ոչ միայն մաս-
նաւոր սպառողները, այլև դերձակները: Այստեղ մի լաւ
օրինակ ենք տեսնում, թէ ինչպէս մի արհեստի գոյութիւնը
պայմանաւորուած է մի ուրիշ արհեստով:

Դիւարիկակար: Կան երկու տեսակ գլխարկակարներ:
Մէկը գործ է ածում օրպէս հում նիւթ տեղական, հասա-
րակ մորթերը, որ նա առնում է մսագործերից և թեթև
կերպով նախապատրաստում է (մշակում է): Այդպիսի մոր-
թուց կարած գլխարկները (փափախները) համարեա միայն
գիւղացիք են ծածկում: Երկրորդ տեսակի գլխարկակարը
գնում է շատ աւելի նուրբ և թանգագին մորթիներ վաճա-
ռականներից, որոնք ներմուծում են իրանց ապրանքը (Շի-

բազի և Բուխարայի մորթիներ) Պարսկաստանի կողմից: Այդ մորթիները գրեթե տասն անգամ աւելի թանգ են տեղականներին և պահանջում են աւելի նուրբ նախապտորաստուծիւն: Սրանցից կարած գլխարկները ծածկում են աւելի հարուստ մահմեդականներն ու հայերը (անցնող սերունդը): Վարպետներն էլ մեծ մասամբ մահմեդականներ են:

Կոշկակարը կարում է բազմատեսակ կոշիկներ: Կը լինէնք գլխաւոր տեսակներից մի քանիսը:

Չմուշկներ տղամարդկանց և կանանց համար, ըստ որում տուաջինի համար գործ են ածում սևագոյն ու կոշտ կաշի, իսկ երկրորդի համար մեծ մասամբ աւելի նուրբ և պայծառ գոյներ (կարմիր, կապույտ, կանաչ) ունեցող կաշիներ: Յաճախ կանանց չմուշկները զարգարում են ոսկեգոծ թելերով: Չմուշկներ հագնում են նոյնպէս երեխայքը (մտնաւանդ թուրքերի, բայց սակաւ և հայերի): Մանուկների համար կարում են փափուկներ և կոշիկներ, ոչ-երկայն սրունքներով: Վերջիններս պայտեր են ունենում, իսկ փափուկները ոչ: Փափուկները քողեր ունին տրեխների նման, այնպէս որ, երևի, վերջիններից են առաջացել: Այդպիսի կոշիկները աւելի են յարմարում մանուկներին մանաւանդ տուառը, երբ չարածինները պատրաստ են ոտի տակ տալու դաշտեր ու լեռներ, որ չմուշկներով անտանելի կը լինէր, կոշիկների էլ գարշապարները չէին դիմանալ: Այստեղ մեր միտքն եկաւ այն հանգամանքը, որ լեռնային տեղերում գիւղացիք չեն գործածում անիւաւոր սայլեր, որովհետև սահնակաձև սայլը աւելի է յարմարում զարուփոսերին: Կոշկակարը գնում է կաշին տեղական կաշեգործներից: Արհեստանոցում միշտ լինում է ոտնամանների աչքի ընկնող քանակութիւն: Սակայն պատրաստ ծախուող կոշիկները սովորաբար աւելի հասարակն են լինում, ուստի լաւը ցանկացողները պատուէր են տալիս: Բայց երբէք չէ պատահում, որ պատուէրողը կաշի էլ տայ վարպետին:

Կոշկակարի արհեստանոցի մօտակայքում գտնւում է մի «չնչին» արհեստաւոր, որի արհեստը միայն կոշկակարու-

թեան լրացումն է: Մեր խօսքը վերաբերում է պայտողին: Նա մեծ մասամբ իսկի խանութ էլ չէ ունենում, այլ շուկայի որևէ անկիւնում տեղաւորուած է: Նա ունի իւր մօտ մի շարք մեծ ու փոքր պայտեր: Կոշիկը սովորաբար առանց պայտի է ծախւում, ուստի նրան գնողը տանում է իսկոյն պայտ գցողի մօտ, որը չնչին վարձատրութեամբ պայտ է գցում: Այդ վարպետը տունում է պայտերը տեղական դարբիններից. դարձեալ մի օրինակ, որի մէջ մի արհեստաւորը աշխատում է մի ուրիշ արհեստաւորի (ուրեմն ոչ մասնաւոր միւշտարու) համար:

Մեր նկարագրած կոշկակարից պէտք է զանազանել տրեխակարին, որը միայն տրեխներ է կարում: Միայն թէ նա կարում է աւելի նուրբ և աւելի գեղեցիկ, քան մեր արդէն նկարագրածը (գիւղացիների իրանց կարածը): Կաշին գնում է նա խաղաղորդներից, իսկ քողերը նոյն իսկ մագազիններից: Քաղաքացիները հազիւ են տրեխներ հագնում: Տրեխակարի միւշտարիները գիւղացիներն են, իսկ նրա ներկայութիւնը քաղաքում՝ բացատրւում է այն բանով, որ քաղաքը կենդրոնական շուկայ է շրջապատող գիւղերի համար:

Համետագործը շինում է համետներ էշի և մասամբ էլ ձիու համար: Երկուսն էլ կարում են կոպիտ կտաւից և լքցնում յարդով: Էշի համետը աւելի հասարակ է, իսկ ձիունը փոքր ինչ բարդ է: Վերջինս բաղկացած է յարդով լցրած երկու կամարաձև տոպրակներից, որոնք այնպէս միացրած են, որ մէջ տեղում ձուաձև դատարկութիւն են կազմում: Համետագործի արհեստանոցը գտնւում է շուկայի աւելի լեռ ընկած տեղերում: Նա միշտ կտաւի և յարդի պաշար ունի: Նրա գործիքները բաղկացած են մեծ տասեղից (քառորդ արշին երկարութեամբ), գլուխ ունեցող երկաթեայ ձողից և մի տափարակ փայտից: Կտորը փոքր առօրէր կարում են, ներս ճնշելով յարդը լիշեալ ձողով, և լեփոքը կարում են, ներս ճնշելով յարդը լիշեալ ձողով, և լեփոքը տափարակ փայտով խփելով շիտակացնում են: Արհեստանոցում պատրաստ պահւում են մի քանի տասնեակ համետներ, որոնց առնում են միւշտարիները մէկ-մէկ: Վար-

պետը նոյնպէս պատուէրներ է վերցնում, որպիսի դէպքում գործը կատարում է աւելի հոգացողութեամբ: Հում նիւթը երբէք պատուիրողը չէ տալիս, որովհետեւ էժան է և առանձին նշանակութիւն ունենալ չէ կարող: Այդ արհեստը աւելի ստոր է համարուում, ուստի համետագործը ուրիշ վարպետներին հաւասար յարգանք չէ պահանջում և չէ վայելում ժողովրդի մէջ:

Քաղաքացի դարբինը զանազանում է գիւղական դարբնից միայն նրանով, որ նա հնարաւորութիւն ունի մի շարք առարկաներ քանակութեամբ պատրաստելու, օրինակ՝ մեխեր, պայտեր և այլն: Ուստի նրան դասում ենք զին ստացող արհեստաւորների շարքում:

Սազագործը պատրաստում է ասիական զանազան տեսակ երաժշտական գործիքներ, մանաւանդ թառեր, սազեր և այլն: Այդ գործիքների համար հարկաւոր են փայտ ու ձկան կաշի (փամփուշտ), իսկ լարերի համար գործ է ածուում ոչխարի աղիքը: Վարպետը առնում է այդ նիւթերը մեծ մասամբ անմշակ և ինքը նախապատրաստում է նրանց:

Քաղաքացի խառատը նոյնպէս արհեստանոց ունի շուկայում: Նրա գլխաւոր գործիքը ոլորանն է: Նա գործում է գլխաւորապէս պատուէրով, շինելով ստայնանի բարդ գործիքներ, օրօրոցներ, զանազան գործիքների պոռտակաւոր մասեր և այլն: Փայտը առնում է ինքը:

Չուլողը, որ ներկայումս անյետանում է, ձուլում է մանղալներ, մոմակալներ և դրանց նման առարկաներ: Այդ առարկաները մեծ մասամբ այժմ աւելորդ են դարձել, կեանքի փոփոխուելու պատճառով: Օրինակ, նաւթային լամպի սովորական դառնալը աւելորդ է դարձրել մոմակալը. իսկ եւրոպական ձևի վառարանի մուտքը բնակարանի մէջ, դուրս է մղում մանղալը, որ մի ժամանակ իւրաքանչիւր ընտանիքի անհրաժեշտ պէտքերից մէկն էր: Չուլագործութիւնը ուրեմն ընկել է, այս պատճառով ներկայումս գոյութիւն ունեցող ձուլողները միայն վնասուած առարկաները կարկատելով են պարապում, կամ եթէ նոր գործ են կատարում,

այն էլ պատուէր ստանալուց յետոյ. մինչդեռ առաջ ապրանք էին պատրաստում: Այդ մի լաւ օրինակ է, որից տեսնում ենք թէ ինչպէս տնտեսական մի ձևը ընկնելիս, նախ յետ է գնում դէպի այն ձևը, որի մէջ եղել է մի ժամանակ, երբ դեռ զարգացման գագաթնակէտին չէր հասած. որպէս ծերունին շատ անգամ անմեղանում է երեխայի նման:

Զինագործը (խանչալազը) արդէն պատրաստ սուրի (խանչալի) համար պատեան է շինում: Նրա միւշտարին ձեռք է բերում նախ սուրը՝ սուսերագործից և բերում է զինագործի մօտ պատեան շինել տալու: Զինագործը կատարում է հետեւեալ գործողութիւնները. 1) փայտից շինում է պատեանը, 2) եղջիւրից, փայտից և այլն շինում է կոթը, 3) պատեանին կաշի է քաշում, 4) զանազան զարդեր է դնում պատեանի վրայ մետաղեայ թերթիկներից և այլն: Բայց սովորաբար զինագործը ունենում է նա և պատրաստ զէնքեր՝ (խանչալներ) ծախելու համար:

Նոյնը կարելի է ասել և հրացանագործի մասին: Նա պատրաստում է հրացաններ և ատրճանակներ: Ներկայումս նա առնում է ներմուծողներից հրացանի փողը (խողովակը) և շինում է հրացանի բունը (փայտեայ մասը): Ներմուծուող պատրաստ հրացանների ազդեցութեան տակ, հրացանագործութիւնը խիստ ընկել է: Այժմեան վարպետները ստիպուած են բաւականանալ հրացաններ կարկատելով:

Մինչև այստեղ մէջ բերած արհեստների մէջ աշակերտներ կամ օգնականներ պահելու պայմանները համարեա միատեսակ են:

Մի առանձին տեղ է բռնում սնունդ պատրաստող արհեստաւորների խումբը: Ընդհանրապէս կարելի է ասել, որ մահմեդականները աւելի են պարապում այդ տեսակ արհեստներով, քան թէ հայերը: Իսկ վերջիններս զբաղուում են աւելի այն քաղաքներում, ուր հայերը շօշափելի մեծամասնութիւն են կազմում, կամ մահմեդականները շատ քիչ են:

Հակառակ դէպքում, շուկայում սնունդ (ուտելիք) պատրաստողները մասմեղականներ են լինում: Այդ հանգամանքն ունի ի միջի այլոց և իւր կրօնական պատճառը: Ուտելիք պատրաստող հայը կարող է միայն կամ գլխաւորապէս, քրիստոնեայ միւշտարիներ ունենալ, մինչդեռ մասմեղականը կարող է ունենալ և քրիստոնեայ ու մասմեղական միւշտարիներ: Պիտի նկատենք, որ շուկայում պատրաստուող ուտելիքները գլխաւորապէս միայն շուկայումն են միւշտարիներ գտնուում: Ընտանիքը հազիւ է օգտուում սրանցից:

Ուտելիք պատրաստող արհեստաւորներից միքանիսին կը լիչենք:

ա) Հացթուխը: Նա իւր խանութում թոնիր ունի թաղած, ուր օրէկան մէկ կամ միքանի անգամ թխում է. ամբողջ գործը (հունցելը, թխելը) կատարում է հացթուխը իւր օգնականների հետ: Հացը ծախում են կամ տեղն ու տեղը (խանութում), կամ թէ որոշ զիւում անելով՝ տալիս են շրջիկ հացափաճառների, որոնք հացով լի սակառը գրլխներին դրած շրջում են փողոցներում և բարձր ձայնով հաւատացնում ամենքին, թէ այդպիսի հաց ոչ եղել է և ոչ էլ երբ և իցէ կարող է լինել:

բ) Կերակուր պատրաստողը: Սրա խանութի կէսը բռնում է կրակարանը, որի վրայ մի շարք կաթսաներ են դրած կամ խեցամաններ շարած, որոնք զանազան կերակուրներ են պարունակում: Ցանկացողների համար իւրաքանչիւր բոպէ խորոված էլ են պատրաստում: Խանութում գտնուում են թախտեր, հասարակ նստարաններ, մանաւանդ ետեւի մասում, հիւրերի համար: Իսկ փաճառականները և արհեստաւորները, որոնք կէսօրին տուն գնալ չեն կարողանում, բերել են տալիս իրանց ուզածը այդ խանութներից և իրանց խանութում ճաշում:

Այդ հասարակ, ասիական կերակրատները եւրոպական շքեղ հիւրանոցների նախապատկերն են ներկայացնում:

գ) Հայվաջի: Սրա խանութում գտնուում են միքանի մեծ կիսազնդած կաթսաներ, իւրաքանչիւրը մէկ կրակա-

րանի վրայ: Կաթսաներում պատրաստում են միքանի տեսակ քաղցրեղէններ՝ գործ ածելով ալիւր, ձու, ընկույզ և այլն: Այդ քաղցրեղէնները ընդհանուր «հայվա» անունն են կրում, բայց կայ միքանի տեսակի հայվա: Սակաւ է պատահում, որ այդ խանութներից հայվա ծախեն սպառողներին: Իսկ գրլխաւորապէս առնում են սրանցից քանակութեամբ (ОПТОМЪ) շրջիկ հայվափաճառները, որպէս զի մանր-մանր ծախեն սպառող միւշտարիներին: Այս դէպքում շրջիկ փաճառողներն էլ երկու կարգի են բաժանուում: Ոմանք մէկ նստարան են դրնում փողոցի անկիւնում. նստարանի վրայ դնում են հայվայի մեծ կտորները և ցանկացողի համար կտրում են, սկրլանում ամենափոքր քանակութիւնից: Միւս ծախողները կտրատում են նախապէս և տաշտի մէջ շարելով, պտըտում են փողոցներում, ուր վաճառում են մանր զնողներին: Առաջ սրանք սովորութիւն ունէին և երկաթի զանազան կտորներ առնելով տալ, իսկ ներկայումս այդ սովորութիւնը վերացած է:

ՀԱՄԲՍՐՈՒԹԻՒՆԸ *):

Յայտնի է արդէն, որ 17 դարում, Հայաստանում գոյութիւն ունէին համքարութիւնները, որոնք բաւական զարգացած էին: Բայց հաւանական է, որ նրանք շատ աւելի առաջ էլ գոյութիւն են ունեցել հայ արհեստաւորների մէջ, որովհետեւ համքարութիւնները, որպէս հին ժամանակների ճանապարհորդները վկայում են, վաղուց արդէն ծաղկում էին պարսիկների մէջ և Հայաստանը հին ժամանակներում քանիցս գտնուել է Պարսկաստանի ձեռին կամ գոնեա նրա ազդեցութեան տակ: Արհեստների տեխնիկան էլ հայերի և պարսիկների մէջ միատեսակ էին, որից կարելի է եզրակաց-

*) Այս գլուխը կազմելիս օգտուել ենք մանաւանդ պրօֆ. Նդիպարեանցի «Городские цехи» գրքից:

վարպետների կանայքն և երեխաները. սրանք պաշտպանութիւն էին գտնում հարկաւոր դէպքում համքարութիւնների կողմից: «Վարպետի որդին նոյնպէս վարպետ է», ասում է առածը:

Թեկնածուն պարտաւոր էր իւր վարպետին մի ընծայ տալ, վերարկուի կտոր: Եթէ վարպետը մեռած էր, ընծան ստանում էր նրա ընտանիքը: Մի-մի բան էլ հարկաւոր էր տալ համքարութեան գլխաւորին, խորհրդի անդամներին և սուրհանդակին: Վարպետ օրհնելու տօնախմբութիւնը կատարւում էր հացկերութեամբ, որին մասնակցում էին բոլոր վարպետները: Բացի այդ՝ տեղի էին ունենում կրօնական ծիսակատարութիւններ (աղօթք, աւետարանի ընթերցանութիւն):

Համքարութիւնը գնում էր հում նիւթեր և բաժանում իւր անդամներին, իսկ եթէ անդամները իրանք էին առնում հում նիւթերը, պարտաւոր էին վճարել նախապէս որոշած արժէքի համեմատ:

Բոլոր վարպետների ընդհանուր ժողովը արհեստաւորաց ամբողջ դասակարգի գործուն (օրգանն) էր: Բացի այդ՝ համքարութիւնների պարագլուխները առանձին «խորհուրդ» էին կազմում. Էրզրումում, Ախալցխայում, Կարսում և Ախալքալաքում բոլոր համքարութիւնները ընտրում էին մէկ գլուխաւոր, որը կոչւում էր վարպետների վարպետ: Սա քաղաքի բոլոր համքարութիւնների ներկայացուցիչն էր:

Համքարութիւնը մեր դարում հետզհետէ ձևակերպուել է: Անդրկովկասում ուսական կառավարութիւնը ձգտել է համքարութիւնները յարմարացնել իւր ներքին քաղաքականութեան: Կառավարութիւնը անհրաժեշտ չէր համարում լուծել նրանց, այլ ըստ կարելոյն հպատակեցնել Ռուսաստանում տիրապետող ցեխական սկզբունքներին: Այդպէս, 1867 թուին (ապրիլի 5-ին) հրատարակուած է «Կարգադրութիւն» արհեստաւորաց համքարութիւնների մասին: Այդ «կարգադրութեան» նպատակն էր. 1) Համքարութիւնների ներքին կազմակերպութիւնը համաձայնացնել «ցեխային»

ընդհանուր օրէնքների հետ, որպէս զի դրանով համքարութիւնները աւելի ամուր կազմութիւն ստանան և 2) աւելի ճիշտ որոշել համքարութիւնների յարաբերութիւնը ընդհանուր քաղաքային կառավարչութեան հետ:

Այդ կարգադրութեամբ վերակազմուեց համքարութիւնը հետեւեալ կերպով: Ծերակոյտների խորհուրդը լուծուեց, համքարութեան պարագլուխը մնաց որպէս վարչութեան միակ և առաջին «գործօնը»: Նա պարտաւոր է հոգալ արհեստի բարօրութեան և տեխնիկական զարգացման մասին, նոյնպէս արհեստաւորների կարգապահութեան և համերաշխութեան մասին: Նա պիտի հրաւիրէ համքարների ժողովը, միայն թէ նախապէս թույլտուութիւն ստանալով ոստիկանապետից և արհեստաւորների պարագլուխից (ремесленный голова). նա իրաւունք ունի դատերը վերջնականօրէն վճռել, եթէ գործը վերաբերում է 10 ըուբլուց ոչ աւել գումարին: Այդ գումարի սահմանն էլ կարելի է անցնել, եթէ երկու կողմն էլ գրաւոր համաձայնութիւն տան նրան:

Նոյնպէս պահեց իւր գոյութիւնը բոլոր արհեստաւորների ընդհանուր ժողովը, միայն թէ միքանի սահմանափակումներով. այսինքն նա կորցրեց դատավարական և թեկնածուին՝ վարպետի կոչում տալու իրաւունքը: Այդ իրաւունքները անցան ընդհանուր արհեստաւորաց վարչութեան (ремесленная управа): Համքարական ժողովին վերաբերող առարկաներն են. 1) համքարութեան պարագլուխի և գանձապահի ընտրութիւնը, 2) համքարութեան մասնաւոր կարիքների համար տուրքեր նշանակելը, 3) համքարութեան գանձանակի քննութիւնը և այլն:

«Կարգադրութիւնը» նոյնպէս աւելացնում է, թէ «համքարութեան պարագլուխները լուրջ ուշադրութիւն են դարձնում, որ արհեստաւորները, օգնականները և աշակերտները ժամանակին վճարեն իրանց հարկերը և քաղաքային պահանջները, իսկ հակառակ դէպքում համքարական գանձարանն է պատասխանատու»:

Բոլոր արհեստաւորների պարագլուխը ընտրւում է վրս-

տահելի վարպետների միջից երեք տարով, արհեստաւորաց
ամբողջ դասակարգի կողմից և հաստատուում է նահանգա-
պետի կողմից: Պարագլուխը ունի լայնատարած կառավար-
չական և դիսցիպլինական ազդեցութիւն վարպետների և
նոյն իսկ ծերակոյտների վրայ: Նա գլխաւոր գործիքն է,
որի միջոցով կառավարութիւնը և քաղաքային վարչութիւնը
յարաբերութիւն է ունենում արհեստաւորաց դասակարգի հետ:

Որպէս մի ուրիշ, բարձրագոյն գործօն, ներկայանում է
«արհեստաւորաց վարչութիւնը». նա բաղկացած է բոլոր
արհեստաւորների պարագլուխից, որը վարչութեան նախա-
գահը և գլխաւորն է, և համաբարութեանց գլխաւորներից
(ծերակոյտներից): Վերջիններս իրաւունք ունին մասնակցե-
լու նիստերին կամ խմբովին կամ հերթով, միայն թէ այն-
պէս, որ նիստին ներկայ լինին առնուազն, երկու ծերակոյտ-
ներ: Ըստ որում անհրաժեշտ է այն համաբարութեան ծե-
րակոյտի ներկայութիւնը, որին վերաբերում է վճռուելիք
հարցը:

Վարչութեան գործունէութեանը վերաբերում են. 1)
իւրաքանչիւր արհեստի կարիքների հոգատարութիւնը, 2)
համաբարութիւնների իրար հետ ունեցած վէճերի քննու-
թիւնը (ի հարկէ խօսքը արհեստի գործերին է վերաբե-
րում), 3) հսկողութիւն համաբարութիւնների վրայ, որ հար-
րում, 4) կերը և քաղաքային տուրքերը ճշտութեամբ վճարեն, 4)
զանգատներ, վերաբերեալ անճիշտ հարկատուութիւններին և
համաբարութեանց պարագլուխների ծախսած փողերին, 5)
համաբարութեանց պարագլուխների հոգատարութիւնը, բոլոր
շումը, որբերի և որբւայրիների հոգատարութիւնը, բոլոր
համաբարութիւնների մէջ պատահող հիւանդ կամ աշխատանքի
անընդունակ դառած արհեստաւորների պաշտպանութիւնը:

Վերոյիշեալ «կարգադրութիւնը» վերաբերում է Թիֆ-
լիսի համաբարութիւններին, ուր նրանք նշանաւոր տարր են
կազմում: Իսկ նա իրապէս ներգործութիւն ունեցաւ և գա-
ւառներում: Սակայն անպայման կերպով հասնել իւր նպա-
տակին՝ նա Թիֆլիսումն էլ չկարողացաւ: Նա հիմնուած էր

երկապատիկ սկզբունքի վրայ, որովհետև ազատ (համաբարու-
թեան չստանալով) արհեստաւորին էլ ասպարէզ էր տալիս:
Ամեն տեղ միևնույն հետեանքը յայտնուեցաւ: Ամենուրէք
զնաց և գնում է համաբարութիւնը դէպի կորուստ (լուծումն):
Սրա պատճառը պէտք չէ որոնել կառավարութեան այս ու
այն ձեռնարկութեան մէջ, այլ արհեստի ներքին կեանքի
մէջ: Այսինքն մենք գտնում ենք, որ այս ու այն համաբ-
արութիւնը դեռ ամուր է մնում, կամ թուլացել է, նայելով
թէ արդեօք ինքը արհեստը ընկել է, թէ ծաղկում է տա-
կաւին: Օրինակ՝ մանողների, ստայնակների և ներկարարների
համաբարութիւնները բոլորովին լուծուել են, որովհետև այդ
արհեստները կորցրել են իրանց նշանակութիւնը ներմու-
ծուող ապրանքների ազդեցութեան տակ: Արհեստների ընկ-
նելն է պատճառը, որ առհասարակ ներկայումս դեռ գոյու-
թիւն ունեցող համաբարութիւններն էլ դարձել են ազատ
միաբանութիւններ, որոնք չունին նախկին ամբարութիւնը և
նշանակութիւնը, իսկ մի շարք քաղաքներում համաբարու-
թեան հետքերն էլ չեն մնացել:

ՆՐՐՈՐԴ ԳԼՈՒՄ.

Գ Ո Ւ Մ Ա Ր Ա Տ Ե Ր Ը.

Մեծածաւալ արդիւնագործութիւնը՝ Հայաստանում և
Անդրկովկասում ներկայացնում է մեզ շատ քիչ օրինակներ
(մեր խօսքը վերաբերում է միայն ասիական ձևերին): Ար-
հեստագործութեան այդ ձևը կարող է տեղի ունենալ այն
երկրում, ուր փոքր ի շատէ կազմակերպուած ժողովրդական
տնտեսութիւն կայ, ինչ որ երբէք գոյութիւն չէ ունեցել
մեր լիշած երկրում: Այստեղ գտնում ենք, որ իւրաքանչիւր
գիւղ և իւրաքանչիւր քաղաք իւր համար է ապրում և աշ-
խատում, միայն աննշան յարաբերութիւններ ունի ուրիշ
գիւղերի և քաղաքների հետ:

Գոյութիւն ունեցող մի քանի օրինակները ցոյց են տալիս, որ սրանք գլխաւորապէս այն արհեստագործութիւններն են, որոնք պահանջուած են թանգ և հեշտ տեղափոխուող նիւթեր, որոնցից պատրաստուած են այնպիսի պիտուքներ, որոնք ամենուրեք հարկաւոր են, բայց ոչ ամեն տեղ գոյացող: Այդ հազուադէպ օրինակներն էլ չեն կարողացել զարգանալ մինչև գործարանի աստիճանը, այլ մնացել են «գործարածանութեան» (յետոյ պիտի բացատրենք) աստիճանի վրայ: Միայն մետաքսագործութիւնն է կարողացել գործարանական բարձրութեան հասնել: Միքանի օրինակներով կը բացատրենք մեր միտքը:

Քաղաքներում (օրինակ Երևանում) կան մի տեսակ զերձակ-վարպետներ, որոնք իրանք արհեստանոց չունին: Նրանք առնում են զանազան կտորներ, որոնցից իրանց բնակարանում տեսակ-տեսակ հագուստներ են ձևում: Ապա ըստ ժանրում են այդ գործերը կար անող կանանց՝ կարելու (ահա թէ ինչու ենք այդ ձևը «գործարածանութիւն» անուանում): Կարած հագուստները հաւաքում են ի մի և ճանապարհուում գիւղերը՝ ծախելու համար: Հագուստներ ծախում են ոչ միայն փողով, այլ և փոխում են տեղական գործուածքներով, որոնցից յետոյ կրկին հագուստներ են պատրաստել տալիս: Այստեղ տեսնում ենք, որ զերձակը այլ ևս գուտ արհեստաւոր չէ, այլ մի տեսակ վաճառական է, գումարատէր է, որ կարողանում է արհեստաւորներ բանացնել և կտրել արհեստաւորի յարաբերութիւնը սպառողի հետ, որը գումարատիրոջ շատ ձեռնտու է:

Սոյնանման մի օրինակ գտնում ենք Տիգրանաւերտ քաղաքում: Այնտեղ կան մանրիկ խանութպաններ, որոնք տեղական ոտնամաններ են ծախում: Նրանք քանակօրէն պատուիրում են տեղական վարպետներին զանազան ոտնամաններ, որը յետոյ ծախում են իրանց խանութներում մանր մանր: Հաւանականօրէն այդ երեւոյթի պատճառը երկրի մէջ գումարի պակասութիւնն է (40 - 50 տոկոս է վճարուում):

Այդ հանգամանքից օգտուելով, գումարատէրը դարձնում է արհեստաւորին իւր բանուորը:

Նոյն երեւոյթը նկատուած է Էրզրումում՝ պղնձագործութեան մէջ: Գումարատէրը գնում է պղինձը և օրօշ վարձ տալով, պատուիրում է պղնձագործներին՝ շինել իւր համար պղնձեղէններ: Ապա վերցնում է պատրաստ ապրանքը և իւր ուզածի պէս առևտուր է անում նրանցով:

Աւելի բարդ և հետաքրքիր կազմակերպութիւն ունի պղնձագործութիւնը Անդրկովկասում, Գէօգչայի Լահիճ գիւղում *):

Այդ մեծ գիւղի ազգաբնակիւթեան նշանաւոր մասը պղնձագործներ են: Սրանց կարծիքով իրանց նախահայրերը եկած են այստեղ Պարսկաստանից, որտեղ մինչև օրս գոյութիւն ունի նրանց Լահիճստան կոչուած հայրենիքը: Բայց անյայտ է մնում, թէ արդեօք նրանք պղնձագործութիւնն էլ իրանց հետ բերել են, թէ չէ՝ յետոյ են սովորել: Լահիճը ինքը պղինձ չունի (ուշագրութեան արժանի է այդ), այլ ստանում է երկրի ուրիշ կողմերից (Լալաւրից—Բորչալուի գաւառում, Գետաբէկից—Գանձակի գաւառում և այլն): Իսկ ինքը գիւղը ունի. 1) մեծ անտառներ, որոնք տալիս են նրան պղնձագործութեան համար անհրաժեշտ ածուխը, 2) վարժուած վարպետներ: Ազգաբնակիւթեան երրորդ մասը հասկանում է պղնձագործութիւնը. բայց ոչ ոք նրանցից բաւականաչափ գումարատէր չէ, որ կարողանայ այնպէս թանգազին նիւթը մեծ քանակութեամբ գնել, որոշ քանակութեամբ պղնձեղէններ պատրաստել տալ և ապրանքը իւր ձեռքով տարածել երկրի զանազան կողմերում: Եւ ահա լաւ ասպարէզ է բացուած գումարատիրոջ համար: Նա առնում և բերում է պղինձը Լահիճ, բաժանում է տեղական պղնձագործներին, որոնք շինում են պահանջուած կարասիքը և որոշ վարձ ստանում: Վարձը որոշուած է կշիռին և մասամբ ամանների տեսակին նայելով:

*) Քաղում ենք տեղիկութիւնները Աբէլեանց. Исследования этнон. быта гос. Крестьянъ въ Геокч. и Шем. уѣзд. Կր. 179:

Կարճ կերպով կը ծանօթացնենք արհեստի հետ.
 Արհեստանոցը գտնուում է շուկայում, մի որևէ ընդարձակ խանութում: Իւրաքանչիւր արհեստանոց ունի մօտ 300 ըուբլու գործիքներ: Բացի սալից և սղոցներից, բոլոր մնացեալ գործիքները պատրաստուած են տեղական դարբինների ձեռքով: Ածուխն էլ առնում են համագելուացի ածխագործներից:

Պղինձը հալում են կրակարանում և նրանից թիթեղներ ածում: Այդ գործին մասնակցում են բացի վարպետից նոյնպէս միքանի բանուորներ: Այդ թիթեղները ճեղքում են՝ ցանկալի ձև տալու համար: Այդ աշխատութիւնը գործի մէջ ամենադժուարներից մէկն է: Զբաղում է վարպետը 13 բանուորներով: Մէկը վառարանի մօտ է ծառայում. նա մօտ է բերում ձևը և տանում է նրան: Երկրորդը ծառայում է փուքսին, երրորդը կտրատում է, չորրորդը կռնահարում է, և 9 բանուորներ մուրճ են գործածում: Մշակների մի այդպիսի խումբը կարող է օրէկան 10 փութ պղինձաթիթեղ պատրաստել. մի քանակութիւն, որից մէկ վարպետ երկու աշակերտներով միայն մի ամսուայ ընթացքում կարող է ամաններ պատրաստել:

Աւելի բարդ զարգացումն ունի մանուսագործութիւնը Տաճկական Հայաստանում: Մանուսան բաւական նուրբ գործուած է բամբակից: Մանուսագործութիւնը տարածուած է Տաճկա-Հայաստանի շատ քաղաքներում և ամենուրէք գտնուում է հայերի ձեռքում: Ծանօթանանք նրա տնտեսութեան հետ:

Տեղական վաճառականները ստանալով թելը Անգլիայից (Մանչեստերից), ծախում են մանուսագործներին 10 տոկոս աշխատանքով: Մանուսագործը ունի իւր մօտ մի օգնական-վարպետ: Սա թրջում է թելը խաշիլի մէջ (նուրբ ցորենի ալիւրից պատրաստած խմոր) որպէս զի ամրանայ. ապա տալիս են թելը մանող կանանց, որոնք փոխադրում են թելը ճախարակի միջոցով մասուրայի վրայ: Մասուրան մէջը դատարկ փայտիկ է մատիտի մեծութեամբ: Այս խեղճ կա-

նայք գործում են ամբողջ տարին արևածագից սկսեալ մինչև ուշ գիշերը իրանց ճախարակների առաջ: Յետոյ թելը լսնձնուում է թափիչին և վերջապէս բաժանուում է ըուբլահներին, որոնք սեփական արհեստանոցներում մանուսան գործում են: Վերջապէս պատրաստ մանուսան լետ է գալիս մանուսագործի (գումարատիրոջ) մօտ, որը քանակօրէն ծախում է վաճառականներին:

Սրա նման կազմակերպութիւն ունի և մետաքսագործութիւնը, որը սակայն զարգացել է մինչև գործարանի աստիճան: Մետաքսագործը գնում է հում մետաքսաթելը, «թափ է տալիս» իւր բնակարանում, ընկում է տեսակները որակութեան համեմատ: Ապա տալիս է թելը մանող կանանց, որոնք վարձատրութիւն ստանալով, աշխատում են իրանց բնակարաններում: Յետոյ վերադարձնում են թելը մետաքսագործի տունը, որտեղից ուղարկում են եփելուներկելու և այլն: Վերջոպէս մշակուած, պատրաստուած թելը բաժանում է մետաքսագործը իւր գործարանում՝ աշխատող վարպետներին, ուր նրա պատուէրի համեմատ և մասամբ նրա հսկողութեան տակ, զանազան մետաքսեղէններ են գործում: Զուհակները վարձատրում են իրանց կատարած գործի քանակութեան և տեսակի համեմատ: Վարպետների օգնականները և աշակերտները ստանում են գործարանատիրոջից շաբաթավարձ կամ ամսավարձ: Պատրաստ ապրանքը վաճառում է գործարանատէրը ուղղակի սպառողներին կամ շրջիկ մանրավաճառներին:

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

2014

11403

« Ազգային գրադարան »



NL0084307

